

**Բարձրագույն կրթությունը Հայաստանում այսօր.  
առկա խնդիրների վերլուծություն**

**Հաշվետվությունը պատրաստվել է «Բաց հասարակության  
հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպության համար**

**ԿԵՀ բարձրագույն կրթության վերլուծական կենտրոն  
Բուդապեշտ, հունիս 2013թ.**

Բարձրագույն կրթության վերլուծական կենտրոնը Բուդապեշտի Կենտրոնական եվրոպական համալսարանի (ԿԵՀ) առանձին ստորաբաժանում է, որի նպատակն է խթանել բարձրագույն կրթության ոլորտում գիտամեթոդական կիրառական հետազոտությունների իրականացումը աշխարհի տարբեր երկրներում: Կենտրոնը հատուկ ուշադրություն է դարձնում կիրառական ուսումնասիրություններին և բարձրագույն կրթությունը գործնականում կիրառելու փաստացի հեռանկարներին, ինչպես նաև ժողովրդավարության զարգացման հետ կապված հարցերին: Բացի դրանից, ԿԵՀ դասախոսները, գիտաշխատողները և ասպիրանտները, այլ ԲՈՒՀ-երի և կազմակերպությունների մասնագետների հետ համատեղ, իրականացնում են ավելի նեղ մասնագիտական ուսումնասիրություններ:

Սույն հաշվետվության հեղինակներ են՝ Լիվիու Մաթեյը, Յուլիա Իվինսկան (Կենտրոնական եվրոպական համալսարան, Բուդապեշտ) և Կուն Գեվենը (Եվրոպական համալսարանական ինստիտուտ, Ֆլորենցիա):

# Բովանդակություն

<b>I. ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԼՔ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.....</b>	<b>2</b>
<b>II. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....</b>	<b>7</b>
<b>III. ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ և ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....</b>	<b>9</b>
<i>III.1. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ</i>	<i>10</i>
<i>III.1.a. «Բոլոնյան գործընթացի» տեղը և իմաստը.....</i>	<i>10</i>
<i>III.1.b. Կարծիքներ Հայաստանում բոլոնյան ռեֆորմների ընթացքի մասին՝ հաջողությունն, թե՞ ձախողում.....</i>	<i>13</i>
<i>III.1.c. Քաղաքական ռեժիմի կողմից իրականացվող անհամաչափորեն ինտենսիվ վերահսկողությունը.....</i>	<i>17</i>
<i>III.1.d. Բարձրագույն կրթության հարցերի շուրջ բաց հանրային քննարկումների պակասը.....</i>	<i>20</i>
<i>III.1.e. Ռեֆորմների բովանդակության և էության մասին տեղեկատվության և հասարակական ընկալման պակաս: Բոլոնյան ռեֆորմները որպես «օտար» գործընթաց ընկալելու խնդիրը.....</i>	<i>22</i>
<i>III.1.f. Ռեֆորմները կրում են ձևական բնույթ և խցանվում են համակարգում: Դրանք բուհական բյուրոկրատիայի բարձր և միջին մակարդակներից այն կողմ չեն գնում:.....</i>	<i>24</i>
<i>III.1.g. Միջազգային կազմակերպությունների դերը.....</i>	<i>25</i>
<i>III.1.h. Զանգվածային արտագաղթ.....</i>	<i>26</i>
<i>III.1.i. Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում առկա կրթական մոդելը.....</i>	<i>27</i>
<i>III.1.j. Բարեփոխումների դաշտը և ուղղությունը.....</i>	<i>29</i>
<i>III.2. ԲՈՒՀ-ԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ</i>	<i>32</i>
<i>III.2.a. Գիտահետազոտական ուսումնասիրություններ.....</i>	<i>32</i>
<i>III.2.b. Դասավանդման մոտեցումներ և մեթոդաբանություն.....</i>	<i>35</i>
<i>III.2.c. Բարձրագույն ուսումնական հաստատությունների վարչական անձնակազմը, դեկավարությունը և կառավարումը.....</i>	<i>38</i>
<i>III.3. ՊՐՈՖԵՍՈՐԱԿԱՍԱԽՈՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԱՆԴԱՄՆԵՐ (ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐ)</i>	<i>40</i>
<i>III.4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ</i>	<i>42</i>
<i>III.5. ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԶԱՏԱԳՈՎՆԵՐԻ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ 100-ՅԱԿԸ»</i>	<i>44</i>
<b>IV. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՄԱՐ.....</b>	<b>46</b>

## I. Ամփոփ տեղեկանք հաշվետվության մասին

Մույն հաշվետվության մեջ ներկայացված են անկախ մասնագետների կողմից Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտի ուսումնասիրության արդյունքները և եզրակացությունները: Ուսումնասիրությունը նախաձեռնվել է «Բաց ասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպության (այսուհետ՝ ԲՀՀ-Հայաստան կամ Հիմնադրամ) կողմից: Այն իրականացվել է 2012 թվականի դեկտեմբերից մինչև 2013 թվականի հուլիս ընկած ժամանակահատվածում և ներառել է Հայաստանում գործող բոլոր տեսակի բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ պետական, մասնավոր և միջազգային:

*Ուսումնասիրությունը եղել է նպատակային: Այն, մասնավորապես, անդրադարձել է ոլորտում իրականացվող ռեֆորմներին, քանի որ Հայաստանը 2005 թվականին միացել է բոլոնյան գործընթացին, ինչպես նաև բարձրագույն կրթության ոլորտի ազդեցությանը բաց հասարակության զարգացման վրա:*

Ուսումնասիրության արդյունքների հիման վրա ներկայացվել են առաջարկություններ, որոնք թույլ կտան ԲՀՀ-Հայաստան կազմակերպությանը հստակեցնել իր հետագա քաղաքականությունը և ծրագրերը ոլորտում: Ուսումնասիրության արդյունքները և եզրակացությունները կարող են հետաքրքրել նաև ոլորտի այլ շահագրգիռ կազմակերպություններին:

### **Ուսումնասիրության նախապատմությունը**

Մոտ երկու տասնամյակ շարունակ ԲՀՀ-Հայաստանը զգալի ֆինանսական միջոցներ և ջանքեր է ներդրել նախկինում Սովետական Միության մաս կազմող Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտի ռեֆորմների իրականացմանն աջակցելու համար: Իր հերթին, ԲՀՀ-Հայաստանն ակնկալում էր, որ իրականացվող ռեֆորմները կնպաստեին նրան, որ երկիրը շարունակեր իր առաջընթացը ժողովրդավարական զարգացման ուղով՝ հավատարիմ մնալով բաց հասարակության այն արժեքներին, որոնք կազմում են ԲՀՀ-Հայաստանի առաքելության առանցքը: Վերջին շրջանում Հիմնադրամի մեծ ուշադրություն է դարձրել Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում բոլոնյան ռեֆորմների, և մասնավորապես՝ դրանց որակական (որակի ապահովման) բաղադրիչի իրականացմանը: Որակի ապահովումը դիտվում էր ԲՀՀ-Հայաստանի և ՀՀ շահագրգիռ մարմինների կողմից որպես բարձրագույն կրթության ամբողջ համակարգի ռեֆորմների բարեհաջող իրականացման գրավական:

2012 թվականին Հիմնադրամը որոշում է իրականացնել ոլորտում իր քաղաքականության և ծրագրերի վերանայում՝ դրա հիմքում դնելով ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի ուսումնասիրությունը արտաքին մասնագի-

տացված կազմակերպության կողմից: Այս որոշումը հիմնականում պայմանավորված էր Հիմնադրամի խորհրդի և գործադիր ղեկավարության մոտ առկա այն մտավախությամբ, որ երկրի բարձրագույն կրթության ոլորտում տեղի ունեցող իրադարձությունները ոլորտը տանում են անցանկալի ուղղությամբ: Որևէ առաջընթաց չի նկատվում, և նույնիսկ ստեղծվում է կայուն հետընթացի տպավորություն, ինչն ընդհանուր առմամբ բացասաբար է անդրադառնում հասարակության վրա: Քանի որ Հիմնադրամն աշխատում էր ռեֆորմների ընթացքին նպաստող նոր ռազմավարության մշակման վրա, այն հարց բարձրացրեց ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում տեղի ունեցող իրադարձությունների և ոլորտի վրա մինչ օրս Հիմնադրամի գործունեության ազդեցության մասին ավելի մանրամասն տեղեկություններ հավաքելու վերաբերյալ:

ԲՀՀ-ն իհարկե քաջատեղյակ է ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում տեղի ունեցող զարգացումներին և կարող է ինքնուրույն վերլուծել առկա խնդիրները: Մակայն, իր սեփական տեսակետները բացարձակ ճշմարտության տեղ ընդունելու փոխարեն, Հիմնադրամը հրավիրեց ԿԵՀ-ի «Բարձրագույն կրթության վերլուծական կենտրոնին» արտաքին անկախ ուսումնասիրություն իրականացնելու համար: ***Ուսումնասիրությունը հաստատեց ԲՀՀ-Հիմնադրամի տեսակետներից մի քանիսը, օգնեց հստակություն մտցնել մի շարք այլ մտտեցումների մեջ և թույլ տվեց նոր տեսանկյունից նայել ու նոր մեկնաբանություններ տալ մի շարք հարցերին:***

### **Հիմնական արդյունքները և եզրակացությունները**

Ուսումնասիրության հիմնական արդյունքներն ու եզրակացությունները, որոնք մանրամասնորեն ներկայացված են սույն հաշվետվությունում, կարող են ամփոփվել հետևյալ կերպ.

- 1. Հայաստանն ունի բացառիկ մարդկային պոտենցիալ բարձրագույն կրթության ոլորտում.*** Մա ակնհայտ է դառնում, երբ տեսնում ես, թե քանի ուսանող, դասախոս և գիտաշխատող է ամեն տարի հեռանում հանրապետությունից ու զգալի հաջողությունների հասնում այլ երկրներում: Ցավոք սրտի, այդ տաղանդավոր կադրերը բավարար չափով չեն կարողանում իրենց տեղը գտնել հայրենիքում: Այս խնդրի լուծման համար կպահանջեն զգալի բարեփոխումներ ինչպես բարձրագույն կրթության, այնպես էլ այլ ոլորտներում:
- 2. Չնայած հնչող հայտարարություններին, Հայաստանի բարձրագույն կրթությունը չի շարժվում նախանշված ռեֆորմների ճանապարհով:*** Փոխարենը, բարձրագույն կրթության համակարգը մտել է մի փակուղի,

որտեղ.

- *քաղաքական ռեժիմն<sup>1</sup> իրականացնում է չափից ավելի խիստ վերահսկողություն,*
- *չկա բարեփոխումների իրատեսական և հուսալի ծրագիր,*
- *համատարած իշխում է կաշառակերությունը,*
- *շարունակաբար իջնում են որակի ստանդարտները, և*
- *ստկա է երիտասարդ ու շնորհալի մասնագետների զանգվածային արտագաղթ:*

3. *Բոլոնյան գործընթացին միանալու և «Բոլոնյան մոդելը» որդեգրելու գաղափարը բավարար օժանդակություն չի ստանում* շահագրգիռ կազմակերպություններից շատերի և բնակչության լայն շրջանների մոտ: Երկրում, այդ թվում բարձրագույն կրթության համակարգում և համակարգի հետ առնչություն ունեցող կազմակերպություններում, շատերը կարծում են, որ ճիշտ կլինեի վերադառնալ բարձրագույն կրթության *սովետական մոդելին*<sup>1</sup>՝ շեշտը դնելով այն հանգամանքի վրա, որ բարձրագույն կրթության որակի ստանդարտները սովետական շրջանում կարծես ավելի բարձր էին: Բոլոնյան մոդելի և բոլոնյան ռեֆորմների ջատագովների տոկոսային հարաբերությունը փոքր է: Նրանց ջանքերը նկատելի են, սակայն նրանք ներկայացնում են փոքրամասնությունը: Ըստ էության, կարելի է ասել, որ Հայաստանի բարձրագույն կրթության ռեֆորմների հակառակորդները թեկուզ և ակամայից և ոչ պաշտոնապես, բայց կազմել են *«ընդդիմադիր կոալիցիա»*: Այս ոչ պաշտոնական և անակնկալ կոալիցիայի անդամները կա՛մ բավարար չափով չեն աջակցում բոլոնյան ռեֆորմներին, կա՛մ պարզապես ընդդիմանում են դրանց: Կոալիցիայի համակիրների շարքերում կարելի է գտնել ամենատարբեր և ամենաանսպասելի խմբերի և խավերի ներկայացուցիչների՝ քաղաքական ռեժիմի անդամների, ԲՈՒՀ-երի վարչության և դասախոսական կազմի ներկայացուցիչների, ուսանողների, ծնողների, ինչպես նաև երկրում ակտիվ սփյուռքի ներկայացուցիչների: Ավելին, կարելի է ասել, որ ՀՀ-ում բոլոնյան ռեֆորմներին ակտիվորեն աջակցող միջազգային կազմակերպություններից մի քանիսն ըստ էության իրենց գործողություններով անգիտակցաբար «ջուր են լցնում կոալիցիայի ջրաղացին»: Չնայած կոալիցիայի ներսում դրա անդամների շահերն ու մտադրությունները միշտ չէ, որ համընկնում են, նրանց արարքներն ու գործողությունները, որոնք ուղղված են ներկա իրավիճակը իր քաղաքականացված ուղղաձիգ

<sup>1</sup> «Քաղաքական ռեժիմ» ասելով այստեղ հասկանում ենք ՀՀ ներկայիս կառավարությունը, առանց այս արտահայտությանը տալու որևէ բացասական իմաստ կամ ենթատեքստ:

վերահսկողությամբ և հստակ ռեֆորմային հորիզոնների բացակայությամբ ամեն գնով պահպանելուն, կամա թե ակամա համընկնում են:

4. ***Չնայած ընդհանուր իրավիճակի բարդությանը, համակարգում կան կարևոր ռեսուրսներ և պրոցեսներ, որոնք կարող են մոբիլիզացվել բարեփոխումների գործին ծառայելու համար:*** Հաճախ այդ ռեսուրսներն ու պրոցեսները մնում են աննկատ, սխալ են մեկնաբանվում և ի վերջո՝ ճնշվում: Ըստ էության, ռեֆորմների պաշտոնական ծրագրի իրականացման արդյունքում համակարգում արդեն իսկ կուտակվել է զգալի փորձ և փոփոխություն կատարելու ցանկություն: Դա երևում է առանձին անհատների և կազմակերպությունների կողմից ժամանակ առ ժամանակ ցուցաբերվող նախաձեռնություններից: Այդ անհատներից ոմանք շատ բարձր որակավորում ունեցող և իրենց գործին ու ռեֆորմների իրականացմանը նվիրված մասնագետներ են: Նրանք հիմնականում աշխատում են ԲՈՒՀ-երում, ՀԿ-ներում, և որ շատ կարևոր է՝ նաև պետական կառույցներում ու գերատեսչություններում:
5. ***Հիմնադրամը չունի բավարար տեխնիկական ու ֆինանսական միջոցներ բարձրագույն կրթության համակարգը միայնակ փոփոխելու համար:*** Այդուհանդերձ, այն կարող է խրախուսել այն պրոցեսները, որոնք նպաստում են բարեփոխումների իրականացմանը: ***ԲՀՀ-ն այն սակավաթիվ կազմակերպություններից է, որոնք ունեն ինչպես ճկունություն, այնպես էլ ստրատեգիական ռեսուրսներ Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում այն փոփոխություններին սատարելու համար, որոնք նպաստում են համակարգում բաց հասարակության արժեքների արմատավորմանը:*** ***Հիմնադրամը, այդուհանդերձ, չի կարող հաջողության հասնել, եթե գործի միայնակ կամ մեկուսացված:***
6. ***Չկա մի այնպիսի «հրաշք» գործողություն կամ միջոց, որի օգնությամբ Հիմնադրամը կկարողանար փոխել Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտի զարգացման ներկայիս ուղղությունը:*** Սա վերաբերում է նաև որակի ապահովմանը: Որակի ապահովման բնագավառում իրականացվող ծրագրերը, որոնք կազմում են ՀՀ-ում ներկայիս բոլոնյան ռեֆորմների առանցքը<sup>2</sup>, այս պահի դրությամբ էական առաջիադացում չեն ապահովել: Դասախոսական կազմի, ուսանողների և ուսումնական միջավայրի վրա վերոհիշյալ ծրագրերը մինչ օրս ունեցել են միայն աննշան կամ չեն ունեցել որևէ դրական ազդեցություն: Բոլոնյան ռեֆորմների այլ բաղադրիչների նման, որակի ապահովումը շարունակում է մնալ քաղաքական ռեժիմի ինտենսիվ վերահսկողության

<sup>2</sup> Տես «ՀՀ-ում 2009-2012 թվականներին բոլոնյան ծրագրերի իրականացման մասին» ազգային հաշվետվությունը:

ներքո, և գրանցված արդյունքները կրում են հիմնականում մակերեսային, ձևական բնույթ:

7. **Հաշվի առնելով բարձրագույն կրթության ոլորտում տեղի ունեցող իրադարձությունների բնույթը, դինամիկան և գրանցվող արդյունքները՝ տրամաբանորեն կարելի է ենթադրել, որ դրանք ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ պլանով կարող են ունենալ բացասական քաղաքական, տնտեսական և սոցիալական ազդեցություն Հայաստանի հասարակության վրա:** Այս ենթադրության օգտին կարելի է բերել բազմաթիվ օրինակներ տարբեր ոլորտներից, որոնք առնչվում են ամենալայն սպեկտրի խնդիրների հետ՝ քաղաքականից մինչև բարոյական և սոցիալականից մինչև տնտեսական: Ստորև բերված են մի շարք նման օրինակներ.
- Հայաստանում կան բազմաթիվ շնորհալի և տաղանդավոր երիտասարդներ, որոնցից շատերը, սակայն, լքում են հանրապետությունը և որպես կանոն այլևս չեն վերադառնում: Տաղանդի արտահոսքը կրում է մասսայական բնույթ և ունի շատ բացասական հետևանքներ:
  - Ներկայումս ՀՀ բարձրագույն կրթության համակարգը չունի փաստացի ինքնուրույնություն, ինչն արգելակում կամ նույնիսկ ի դերն է անում բարեփոխումների գործընթացը:
  - Հայաստանի բարձրագույն կրթության համակարգը օրինակ է ծառայում հասարակության լայն շրջանների համար, սակայն այդ օրինակը, սովյալ դեպքում՝ բաց հասարակության արժեքների տեսանկյունից, կարող է նաև բացասական լինել: Խոսքը գնում է, այնպիսի երևույթների մասին, ինչպես օրինակ կաշառակերությունը, որը «սովորական» բան է դարձել ամենօրյա պրակտիկայում, լավ աշխատանքը ըստ արժանվույն չգնահատելու «ավանդույթը», ինչպես նաև հանրային մասնակցության հարցերում, մասնավորապես՝ բաց երկխոսության սկզբունքով հանրության հետ հարաբերությունների կարգավորման հեռանկարների անիրականությունը:
  - ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում գործող ուսուցման մոդելի առանձնահատկություններից մեկը կայանում է նրանում, որ շրջանավարտների զգալի մասը բավարար չափով պատրաստված չի լինում մասնագիտական կյանքին: Նրանցից շատերն անհրաժեշտ գիտելիքներ չեն ունենում Հայաստանի շուկայում իրենց մասնագիտությամբ (տնտեսագիտություն, հանրային ծառայություններ կամ մասնագիտական այլ ուղղություններ) աշխատելու համար:
8. **Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտի ռեֆորմների հետագա ընթացքը կարևոր է ոչ միայն բարձրագույն կրթության ոլորտի համար:**



Այսպես, ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում տեղի ունեցող իրադարձություններն ավելի մեծ ազդեցություն ունեն երկրի տնտեսության, հասարակության հիմնական կառույցների և աշխարհքաղաքական իրավիճակի վրա, քան նմանատիպ իրադարձությունները տարածաշրջանի այլ երկրներում: **Հայաստանի ապագան զգալի կերպով կախված է երկրի բարձրագույն կրթության ոլորտի ճակատագրից:**

### **Առաջարկություններ**

Կատարված ուսումնասիրության հիման վրա մենք առաջարկում ենք ԲՀՀ-ին դիտարկել **նոր ռազմավարական խնդիրների և նոր տակտիկական մոտեցումների** որդեգրման հնարավորությունը բարձրագույն կրթության ոլորտում իրականացվելիք իր առաջիկա ծրագրերում:

Մեր կողմից առաջարկվող նոր ռազմավարական խնդիրներն են՝ *աջակցել ոլորտում բարեփոխումների համար նպաստավոր դաշտի ձևավորմանը և դրա պահպանմանը և խրախուսել ռեֆորմների սկզբնական ուղղության պահպանումը: Բարեփոխումների դաշտի և ռեֆորմների ուղղության սկզբունքների մասին ավելի մանրամասնորեն խոսվում է սույն հաշվետվության «III.1.յ» բաժնում:*

Նոր տակտիկական մոտեցման առումով մենք առաջարկում ենք Հիմնադրամին *սեփական ուժերով առկա խնդիրները լուծելու փորձեր կատարելու փոխարեն մոբիլիզացնել ոլորտի այլ գործող անձանց և օգնել նրանց լուծելու այդ խնդիրները:*

Կոնկրետ գործողությունների վերաբերյալ առաջարկությունները ներկայացված են ստորև՝ համապատասխան բաժիններում:

## **II. Մեթոդաբանությունը**

Ուսումնասիրությունն իրականացվել է չորս *հիմնական փուլերով*.

1. 2012թ-ի դեկտեմբերից մինչև 2013թ-ի փետրվար՝ առկա նյութերի գրասենյակային ուսումնասիրություն, խորհրդակցություններ միջազգային փորձագետների հետ.
2. 2013թ-ի փետրվար՝ նախնական ուսումնասիրություններ տեղերում, հարցազրույցներ ոլորտի փորձագետների, ԲՀՀ աշխատակազմի և վարչության խորհրդի անդամների հետ:
3. 2013 թ-ի ապրիլ՝ հիմնական ուսումնասիրությունները տեղերում, ավելի քան

70 մանրամասն հարցազրույցներ Երևանում, Գյումրիում, Գավառում և Վանաձորում:

4. 2013թ-ի մայիս-հուլիս ամիսներ՝ տվյալների վերլուծություն և հաշվետվության պատրաստում:

*1-ին փուլը* ներառել է ՀՀ պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների, գիտաշխատողների և ԲՀՀ-ի կողմից պատրաստված հաշվետվությունների, հոդվածների և փաստաթղթերի խորացված վերլուծություն: Ուսումնասիրությունների ժամանակ ծագած հարցերի շուրջ խորհրդակցություններ են անցկացվել բարձրագույն կրթության ոլորտի միջազգային փորձագետների և արտասահմանում սովորող հայ ուսանողների հետ: Ուսումնասիրությունները սահմանափակվել են միայն այն փաստաթղթերով, որոնք թարգմանված են եղել անգլերեն:

*2-րդ փուլում* երկու փորձագետներից բաղկացած աշխատանքային խումբն անց է կացրել նախնական հարցազրույցներ ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի տասնյակ մասնագետների, ինչպես նաև ԲՀՀ-Հայաստանի աշխատակազմի ու վարչության խորհրդի անդամների հետ՝ ուսումնասիրության հիմնական ուղղություններն ու նպատակները որոշելու համար:

*3-րդ փուլում* աշխատանքային խումբը կազմված է եղել մեկ ավագ գիտաշխատողից, բարձրագույն կրթության քաղաքականության գծով մեկ փորձագետից և երկու կրտսեր գիտաշխատողներից: Խումբը խորացված հարցազրույցներ է անցկացրել Երևանում, Գյումրիում, Գավառում և Վանաձորում բարձրագույն կրթության ոլորտի հետ ակտիվորեն կապված մոտ 70 անհատների հետ՝ առանձին-առանձին կամ խմբերով: Այդ անհատների թվում եղել են բարձր, միջին և տեխնիկական մակարդակի պետական պաշտոնյաներ կրթության նախարարությունից և ոլորտի հետ առնչություն ունեցող տարբեր մարմիններից և ծրագրերից, ՀՀ որակի ապահովման ազգային կենտրոնից (ՈԱԱԿ), բոլոնյան գործընթացի քարտուղարությունից, Երևանի վեց պետական, երկու մասնավոր և երեք միջազգային ԲՈՒՀ-երից<sup>3</sup> (պաշտոնյաների թվում են եղել ռեկտորները, ռեկտորների տեղակալները, նախագահները, ամբիոնների վարիչները, դեկանները և վարչության այլ ներկայացուցիչներ),

<sup>3</sup>Պետական ԲՈՒՀ-երից են եղել՝ Երևանի պետական համալսարանը, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը, Հայաստանի պետական մանկավարժական համալսարանը, Երևանի պետական լեզվաբանական համալսարանը, Երևանի պետական բժշկական համալսարանը, Ճարտարապետության և շինարարության Երևանի պետական համալսարանը: Մասնավոր ԲՈՒՀ-երից են եղել՝ Եվրասիական միջազգային համալսարանը և Երևանի Գլաձորի համալսարանը: Միջազգային ԲՈՒՀ-երից են եղել՝ Հայաստանի ամերիկյան համալսարանը, Հայ-ռուսական (ալավոնական) համալսարանը և Հայաստանում ֆրանսիական համալսարանը:

դասախոսներ և ուսանողներ պետական ու մասնավոր ԲՈՒՀ-երից: Անց են կացվել նաև երկու խմբակային (7-10 հոգանոց) հանդիպումներ դասախոսների և էլի երկու խմբակային հանդիպումներ ուսանողների հետ Երևանում: Աշխատանքային խումբն այցելել է նաև շրջանները և հանդիպել Գյումրիի, Վանաձորի և Գավառի համալսարանների ղեկավար մարմինների ներկայացուցիչների հետ: Բացի դրանից, Գյումրիում և Վանաձորում անց են կացվել խմբակային հանդիպումներ թեմատիկ հարցերի շուրջ դասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչների հետ: Ավելին, հանդիպումներ են կազմակերպվել Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում գործող միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ «TEMPUS»-ի, Համաշխարհային բանկի, «DAAD»-ի, Ամերիկյան խորհուրդների, «IREX»-ի և Եվրասիա հիմնադրամի ներկայացուցիչների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող առանձին ծրագրերի ներկայացուցիչների հետ: Հարցազրույց է անցկացվել նաև մասնավոր սեկտորի մեկ ներկայացուցչի հետ:

Աշխատանքների ամբողջ ընթացքում խումբն ուսումնասիրել է Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտին վերաբերող գրականությունն ու նյութերը, մասնավորապես նախկինում կատարված ուսումնասիրությունները, այդ թվում՝ Համաշխարհային բանկի ծավալուն հաշվետվությունը «ՀՀ բարձրագույն կրթության ռեֆորմների կենտրոնի կառավարման մասին»<sup>4</sup>, որը հրատարակվել է 2013 թվականի մայիսի սկզբին:

### III. Հիմնական արդյունքները և եզրակացությունները

Առկա նյութերի ու գրականության ծավալուն ուսումնասիրության և ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի մասնագետների և շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ բազմաթիվ հարցազրույցների արդյունքում աշխատանքային խումբը բավարար քանակությամբ տվյալներ հավաքեց հետագա վերլուծությունների համար: Բարձրագույն կրթության համակարգում, որպես կանոն, լինում են շատ խնդիրներ, որոնք իրենց բնույթով բարդ են և բազմակողմանի: Հաշվետվության այս բաժնի նպատակն է ներկայացնել ոլորտի առավել օրհասական խնդիրների ընդհանուր պատկերը՝ հաշվի առնելով Բաց հասարակության հիմնադրամի առաքելությունը,

<sup>4</sup> Հաշվետվության ինչպես հայերեն, այնպես էլ անգլերեն տարբերակները տեղադրված է Համաշխարհային բանկի ինտերնետային կայքում՝ <http://documents.worldbank.org/curated/en/2013/01/17748657/addressing-governance-center-higher-education-reforms-armenia>

արժեքները և առաջնահերթությունները:

### ***III. 1. Համակարգի մակարդակով***

#### **III.1.a. «Բոլոնյան գործընթացի» տեղը և իմաստը**

Այն, ինչ հիմա Հայաստանում անվանում են «Բոլոնյան գործընթաց», կազմել է 2005 թվականին մեկնարկած բարձրագույն կրթության ոլորտի ռեֆորմների պաշտոնական ծրագրի առանցքը: Հայկական իրականությունում, ինչպես և այլ երկրներում, «Բոլոնյան գործընթացը» միևնույն ժամանակ և՛ պարզ և՛ բարդ հասկացություն է: Որպես ռեֆորմների առանցքում ընկած հասկացություն այն կարող է միաժամանակ ունենալ մի քանի խճճված իմաստ: Ավելին, բոլոնյան գործընթացի նշանակությունն ու իմաստը տարբեր կերպ են մեկնաբանվում շահագրգիռ տարբեր կազմակերպությունների, անձանց ու խմբերի կողմից: Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ հայկական իրականությունում «Բոլոնյան գործընթացի» նշանակությունը կարող է մեկնաբանվել հետևյալ կերպ.

- ***Եվրոպական ինտեգրման մեխանիզմ***. Միանալով բոլոնյան գործընթացին 2005 թվականին Բերգեն քաղաքում, և ցանկություն հայտնելով դառնալու եվրոպական բարձրագույն կրթության տարածքի մաս, Հայաստանն ըստ էության հայտարարեց Եվրոպային ավելի մոտ լինելու իր մտադրության մասին: Բոլոնյան գործընթացին մասնակցությունը թույլ տվեց Հայաստանին մտնելու ոչ միայն բարձրագույն կրթության, այլ նաև քաղաքական դաշտ, որն այլընտրանք էր նախկին Սովետական Միությանը: Այսօր նույնպես, համագործակցությունը ԵՄ-ի հետ և ինտեգրումը դրա կառույցներում կարևոր կետ է երկրի արտաքին քաղաքականության օրակարգում: Բոլոնյան գործընթացը դիտվում է որպես նախապայման եվրաինտեգրման համար և, որպես այդպիսին, կրում է նորմատիվ բնույթ: Կառավարությունն իր հերթին այն կապում է իր միջազգային հեղինակության հետ, մասնավորապես այս փուլում, երբ Հայաստանը մինչև 2015 թվականը նախագահելու է Բոլոնյան քարտուղարությունը եվրոպական բարձրագույն կրթության ամբողջ տարածքի (47 երկրի) համար:
- ***Բարեփոխման «միակ» մոդելը***. «Բոլոնյան գործընթացն» ընդունվել է որպես ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխման պաշտոնական ծրագիր: Ավելին, նույնիսկ այն անհատներն ու կազմակերպությունները, որոնք բացասաբար են գնահատում ռեֆորմների ընթացքը, քննադատում են կառավարության մոտեցումները դրանք կյանքի կոչելու հարցում և

կարծում են, որ բոլոնյան ռեֆորմները շատ քիչ օգուտ են տվել կամ ընդհանրապես ոչ մի օգուտ չեն տվել, հարցազրույցների ժամանակ ընդունել են, որ բարձրագույն կրթության համակարգի բարեփոխման հարցում բոլոնյան գործընթացն այլընտրանք չունի: Այսպիսով, փոփոխությունների կողմնակիցները պնդում են, որ բոլոնյան մոդելը պետք է կյանքի կոչվի, նույնիսկ դրա կիրառման ներկայիս փուլում գրանցված հիասթափեցնող արդյունքների պարագայում:

- ***Ֆինանսական ռեսուրսները գնահատելու հնարավորություն.*** Բոլոնյան գործընթացը և դրանից ակնկալվող հիմնական արդյունքը՝ համաեվրոպական բարձրագույն կրթության տարածքի ստեղծումը, միշտ ոգեշնչել է Հայաստանին, առաջարկելով բարձրագույն կրթության նոր մոդել կամ մոդելներ: Օրինակ, Հայաստանը որդեգրել է գիտական աստիճանների բոլոնյան կառուցվածքը, ուսումնական բալերի փոխանցման եվրոպական կամ բոլոնյան մոդելը (ECTS), որակի ապահովման համակարգի ձևավորման ուղեցույցներն ու ստանդարտները կամ ուսանողների տեղաշարժի և հոսելիության սկզբունքներն ու պրակտիկան: Մինևույն ժամանակ բոլոնյան գործընթացը լավ հնարավորություն էր տալիս ռեֆորմների իրականացման նպատակով ներգրավելու զգալի ***ֆինանսական ռեսուրսներ***՝ և ոչ միայն Եվրոպայից:
- ***Քաղաքական գործիք, որը կարող է օգտագործվել ազգային, ռեգիոնալ և միջազգային մակարդակներով.*** Բոլոնյան գործընթացը և ռեֆորմները նաև ծառայում են որպես ***քաղաքական լեգիտիմության միջոց***, ինչպես ներքին, այնպես էլ միջազգային մակարդակներով: Կառավարության հետաքրքրվածությունը բոլոնյան գործընթացով և դրա քաղաքական դիվիդենդներով երևում է այն բանից, որ կառավարությունը ներակայացրել է մինչև 2015 թվականը Բոլոնյան քարտուղարության համար հյուրընկալող-երկիր հանդես գալու հայտ: Սա լուրջ քայլ է, որն ունի ինչպես տարածաշրջանային, այնպես էլ Եվրոպական նշանակություն, և այն ենթադրում է որոշակի նյութական, մասնագիտական, վարչական և քաղաքական պարտավորություններ պետության համար: Ներկայումս, Բոլոնյան քարտուղարության գրասենյակի աշխատանքը Հայաստանում զերազանց է կազմակերպված, իսկ աշխատակազմը համալրված է բարձր որակավորում ունեցող մասնագետներով: Բոլոնյան քարտուղարության համար հյուրընկալող-երկիր լինելը բացում է տվյալ երկրի համար լայն հնարավորություններ, այդ թվում՝ ռեֆորմներն առաջ տանելու հարցում:
- ***Պատուհան դեպի աշխարհ.*** Հայաստանում շատերի համար, այդ թվում նրանց համար, ովքեր չեն հավատում բոլոնյան ռեֆորմներին, համաեվրոպական բարձրագույն կրթության դաշտ մտնելը տալիս է

առնվազն մեկ հստակ առավելություն՝ Հայաստանի բարձրագույն կրթությունը, մասնավորապես՝ հայ ուսանողները, տեսականորեն կարող են օգուտ քաղել այս կայուն և անվտանգ պատուհանից դեպի մեծ աշխարհ: Սա քիչ բան չէ. նման պատուհան կար Սովետական Միության տարիներին, սակայն այդ պատուհանը Միության փլուզումից հետո, մասամբ փակվեց: Համաեվրոպական բարձրագույն կրթության տարածքը էապես ընդլայնում է նախկին հորիզոնները՝ թույլ տալով Հայաստանին և հայ ուսանողներին խուսափել մեկուսացումից:

- **Նոր ինքնություն հաստատելու գործիք.** Հայաստանում բոլոնյան ռեֆորմների առաջին սատարողներն են եղել մի խումբ գիտնականներ և ադմինիստրատորներ: Բոլոնյան գործընթացում նրանք տեսնում էին Հայաստանի համար նոր ազգային ինքնություն ձևավորելու և «սովետականը» «եվրոպականով» փոխարինելու հնարավորություն: Դրան հասնելու համար պահանջվում էին ռադիկալ փոփոխություններ բարձրագույն կրթության համակարգում: Բոլոնյան գործընթացի միջոցով նոր եվրոպականացված ազգային ինքնություն ձևավորելու հարցը մինչ օրս մնում է օրակարգում, սակայն միասնական մոտեցում դրա վերաբերյալ տարբեր շահագրգիռ անձանց, այդ թվում՝ պետական մարմինների մոտ չկա: Ժամանակ-առ-ժամանակ այս գաղափարը հարցականի տակ է դրվում առանձին ուսանողների, դասախոսների և ծնողների կողմից, ովքեր, թեկուզև ոչ բացահայտորեն, արտահայտվում են ի օգուտ սովետական մոդելին վերադառնալուն: Ըստ նրանց, նման վերադարձը թույլ կտա վերջ դնել բարձրագույն կրթության համակարգի շարունակական դեգրադացիային, որը շատերի կարծիքով կանգ չի առել Սովետական Միության փլուզումից հետո: Նրանք նաև պնդում են, որ բարձրագույն կրթության սովետական մոդելը լավագույնն է եղել: Հարցազրույցների ժամանակ ի հայտ եկան նաև այլ հետաքրքիր հանգամանքներ՝ կապված ինքնության ձևավորման այս հարցի հետ: Այսպես, Երևանում Մոսկվայի կառավարության կողմից հիմնադրված ռուսալեզու Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի ներկայացուցիչը նշեց, որ Հայաստանում մրցունակ լինելու նպատակով համալսարանը պետք է դրսևորի իրեն որպես բավարար չափով «հայկական»: Եվ այս նպատակին հասնելու համար Սլավոնական համալսարանն իր կամքով միացել է բոլոնյան գործընթացին՝ որդեգրելով բոլոնյան մոդելը: Այլ կերպ ասած, այս պարագայում **հայկական դառնալ** նշանակում է **դառնալ եվրոպական** կամ եվրոպական մոդելին համապատասխանող:

**Կարելի է ասել, որ լավ թե վատ բոլոնյան գործընթացը և դրանից բխող**

*ռեֆորմները կենտրոնական տեղ են զբաղեցնում Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում և քաղաքականությունում:*

### **III.1.b Կարծիքներ Հայաստանում բոլոնյան ռեֆորմների ընթացքի մասին՝ հաջողություն, թե՛ ձախողում**

Անժխտելի է այն, որ բոլոնյան ռեֆորմների ազդեցության տակ Հայաստանում տեղի են ունեցել բազմաթիվ շոշափելի փոփոխություններ: Դրանց շարքում կարելի է նշել գիտական աստիճանների նոր կառուցվածքը, նոր ընթացակարգերը և մեխանիզմները (օրինակ՝ ուսումնական բալերի փոխանցման եվրոպական մոդելը (ECTS), որը փոխարինում է դիպլոմին), ազգային մակարդակով նոր իրավական ակտերի ընդունումը (ինչպես օրինակ «Որակավորումների ազգային շրջանակի» ընդունումը), որակի ապահովման նոր սահմանումները և ինստիտուցիոնալ կառույցները (Որակի ապահովման ազգային կենտրոնի և ԲՈՒՀ-երի մակարդակով որակի ապահովման կառուցվածքային միավորների ստեղծումը) և այլն: *Այդուհանդերձ, հարցազրույցների ժամանակ արտահայտված գերիշխող կարծիքը, որը հաստատվում է նաև ԲՈՒՀ-երում կատարված փաստացի ուսումնասիրություններ արդյունքներով, այն էր, որ վերը նշված փոփոխությունների մեծ մասը կրում են արտաքին ու ձևական բնույթ, իսկ էությունը և բովանդակությունը մնում են անփոփոխ: Բոլոնյան ռեֆորմները որևէ շոշափելի, դրական ազդեցություն չեն ունեցել դասավանդման և սովորելու, գիտահետազոտական աշխատանքների կամ կառավարման համակարգի աշխատանքի բուն էության վրա: Այսպիսով, հարցազրույցներին մասնակցած անհատների մեծամասնությունը, և նույնիսկ նրանք, ովքեր բացեիքաց կողմ էին արտահայտվում ռեֆորմներին, բնութագրեցին գործընթացը որպես «ձախողված»:* Ավելին, կարծիք արտահայտվեց, որ առանձին դեպքերում արդյունքները եղել են բացասական: Օրինակ, չնայած այն բանին, որ այդքան մեծ ուշադրություն է դարձվում որակի ապահովման համակարգի վրա, հարցազրույցներից պարզ դարձավ, որ ընդհանուր առմամբ որակը (եկելով բարձրագույն կրթության համակարգում պրոցեսների կամ արդյունքների որակից) մնացել է անփոփոխ կամ էլ ավելի է վատացել:

*Որակի ապահովման հարցը շատ կարևոր է Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում բոլոնյան ռեֆորմների պատմությունն ու ներկա իրավիճակը հասկանալու համար:* Սույն հաշվետվության իմաստով կարևոր է նաև հասկանալ, թե ինչպես են ընկալվում ռեֆորմների արդյունքները հիմնական շահագրգիռ անձանց, այդ թվում՝ ԲՀՀ-Հայաստանի կողմից:

Ներկայումս, բոլոնյան ռեֆորմների պաշտոնական խնդիրը որակի ապա-

հովման նոր համակարգի կառուցումը և դրա կիրառումն է <sup>5</sup>: Դա ենթադրում է ռեֆորմների ամբողջական կոմպլեքսի իրականացում, այս թվում՝ նոր իրավական ակտերի ընդունում և ոլորտի ու առանձին հիմնարկների մակարդակով նոր ինստիտուցիոնալ կառույցների և ընթացակարգերի ստեղծում: Ինստիտուցիոնալ հավաստարմագրման ծրագիրը, որն այժմ ընթացքի մեջ է, առանձնակի կարևոր դեր է խաղում այս համատեքստում:

Սկզբում, դեռևս մինչև 2005 թվականը, մի քանի ԲՈՒՀ-եր կամավոր հիմունքներով սկսեցին իրականացնել բոլոնյան գործընթացով պայմանավորված փոփոխություններ, ինչպես օրինակ բակալավրական ու մագիստրական ցիկլերի նորմոնումը՝ համաձայն 1999 թվականի բոլոնյան հայտարարագրի: 2005 թվականին բոլոնյան գործընթացին պաշտոնապես միանալուց հետո, բարձրագույն կրթության համակարգի ռեֆորմներն ակտիվացան, և նպատակը հայկական համակարգը եվրոպական մոդելի հետ համատեղելի դաձնելն էր: Այս հանգամանքը, ինչպես նաև քաղաքական միջավայրը փոխելու պատրաստակամությունը, պատճառ հանդիսացան, որ միջազգային կազմակերպություններն ու հայկական ՀԿ-ները, ինչպես նաև ԲՀՀ-ն, իրենց օժանդակությունը տրամադրեն երկրում իրականացվող ռեֆորմներին և մասնակցեն բոլոնյան գործընթացով պայմանավորված մի շարք ծրագրերի և նախաձեռնությունների: Այդ կազմակերպությունների առաջին խնդիրն էր **ընտրել այն բնագավառը**, որտեղ նրանց օժանդակությունն առավել արդյունավետ կլիներ ռեֆորմների ծրագիրն առաջ մղելու համար: Վերջին տարիների ընթացքում Հիմնադրամը, ինչպես և մի շարք այլ կազմակերպություններ, որոշեց իր աշխատանքը կենտրոնացնել **որակի ապահովման** խնդիրների վրա և նախաձեռնեց ինստիտուցիոնալ մակարդակով որակի ապահովման ծրագրեր: Կարճ ժամանակում պարզ դարձավ, որ **որակի** խնդիրների ետևում ընկած է **որակի ապահովման մեխանիզմների** անկատարությունը: Առաջ քաշվեց այն գաղափարը, որ շեշտը պետք է դրվի ինստիտուցիոնալ մակարդակով որակի ապահովման համակարգերի ու մեխանիզմների վրա: Սա տրամաբանական ենթադրություն էր, որին համաձայն էին նաև պետական մարմինները: Այսպիսով, «Որակի ապահովման ազգային կենտրոնի» (ՈԱԱԿ) ստեղծումը դարձավ պետական առաջնահերթություն և ի կատար ածվեց 2008 թվականին: Միջազգային կազմակերպությունները, ինչպես օրինակ Համաշխարհային բանկը<sup>6</sup> (որը տրամադրել էր մեծ նպատակային վարկ) կամ ԵՄ-ի «TEMPUS» ծրագիրը նույնպես համամիտ էին շեշտադրումը որակի

<sup>5</sup> Օրինակ, տես՝ «2009-2012 թթ. բոլոնյան գործընթացի իրականացման մասին ազգային հաշվետվությունը», Հայաստանի Հանրապետություն, 2012թ.

<sup>6</sup>Մարոյան, Ս. 2008թ. «Որակի ապահովումը ՀՀ բարձրագույն կրթության համակարգում. Վերլուծություն և առաջարկություններ», Երևան. Համաշխարհային բանկ: Նաև, cf. ANQA. 2013թ. «Հայաստանում որակի ապահովման գծով տեխնիկական օգնության ծրագիր» <http://www.anqa.am/argata/>



ապահովման խնդրի վրա դնելու գաղափարի հետ<sup>7</sup>: Կարծիքների այս համերաշխությունը հանգեցրեց ինստիտուցիոնալ մակարդակով կոնկրետ գործողությունների մեկնարկին: Ըստ էության, որակի ապահովման ծրագրերն այնքան շատ էին, որ հարցազրույցներին մասնակցած մասնագետներից մեկն ասաց, որ ինքը անձամբ մասնակցել է ազգային և միջազգային աղբյուրներից ֆինանսավորվող ավելի քան 15 տարբեր ծրագրերի այս ոլորտում՝ սկսած 2008 թվականից:

Տպավորություն է ստեղծվում, որ ինչպես և բոլոնյան ռեֆորմների ամբողջ գործընթացի պարագայում, այնպես էլ *որակի ապահովման* մասով դրանց բաղադրիչների իրականացումը բարձրագույն կրթության իրական *որակի* վրա «համոզիչ» ազդեցություն չի թողել: Իրավիճակի ընկալումը ոլորտի տարբեր դերակատարների կողմից տարբեր է: Կառավարությունը կարծում է, որ արդյունքներն ավելի համոզիչ կլինեն գործընթացի վերջում, և դրա համար պահանջվում է միայն ժամանակ: Միջազգային կազմակերպություններն ունեն ավելի քննադատական մոտեցում, սակայն գործընթացը ձախողված չեն համարում և պլանավորում են շարունակել օժանդակությունը: Մեր սեփական կարծիքը հիմնվում է դասախոսների, ԲՈՒՀ-երի կառավարիչների, ուսանողների և մի շարք այլ անձանց (կառավարություն, ՀԿ-ներ և գործարար շրջաններ) հետ անցկացված հարցազրույցների վրա: Եզրակացությունը հետևյալն է. որակի ապահովման ռեֆորմների ընդհանուր ազդեցությունը մինչ օրս չի կարելի անվանել «էական» կամ «դրական»: Միակ ակնհայտորեն դրական արդյունքը, որ մենք նկատել ենք, դա նոր (միջազգային/եվրոպական) սահմանումների և հասկացությունների օգտագործումն է և շարունակվող քննարկումը որակի ապահովման համակարգի վերաբերյալ, որի արդյունքում ձևավորվում են նոր պաշտոնական կառույցներ ազգային և միջազգային մակարդակներով: Այս զարգացումներն, այդուհանդերձ, չեն կարող մեկնաբանվել որպես ուսուցման և ընդհանուր կրթական միջավայրի որակի բարելավում: Չնայած կարելի է միշտ էլ առարկել, ասելով որ ժամանակի ընթացքում ամեն ինչ կկարգավորվի (միգուցե դեռ շատ շուտ է ռեֆորմներից արդյունքներ ակնկալել), մենք պետք է արձանագրենք, որ որակի ապահովման հետ կապված հարցերում խնդիրները նույնն են, ինչ բոլոնյան մնացած բարեփոխումների դեպքում, այն է՝ փոփոխությունների գործընթացը պահվում է խիստ վերահսկողության տակ, այն նախագծվում և իրականացվում է կենտրոնից, շահագրգիռ անձանց հետ երկխոսություն կամ խորհրդակցություններ չեն անցկացվում, այնինչ դրանք կօգնեին բացահայտել ու հրապարակել իրականացվող ռեֆորմների թերությունները և միջոցներ ձեռնարկել դրանք վերացնելու ուղղությամբ: Հիմնական

<sup>7</sup> NTO. 2013. Tempus Projects.

[http://www.tempus.am/index.php?option=com\\_content&view=article&id=1257&Itemid=605&lang=en](http://www.tempus.am/index.php?option=com_content&view=article&id=1257&Itemid=605&lang=en)

պրոբլեմն ընկած է ոչ թե մասնագիտական այլ քաղաքական հարթության մեջ (որակի ապահովման մասնագետների պակաս չկա): Բերենք ռեֆորմների իրականացման գործընթացին քաղաքական չհիմնավորված միջամտության մի քանի օրինակ. Վարչապետն անձամբ նախագահում է Որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) վարչության խորհրդի նիստերը և ի պաշտոնե ուղղակիորեն միջամտում է կազմակերպության աշխատանքին, Վարչապետն ու Նախագահը կարող են ուղղակի ազդեցություն ունենալ կազմակերպության ֆինանսավորման վրա, ներգործել Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող որակի ապահովման լայնամասշտաբ ծրագրերի նախագծման և իրականացման ընթացքի վրա:

Մեկ այլ պրոբլեմ է բյուրոկրատիան: Որակի ապահովման ռեֆորմները մշակվում և իրականացվում են բյուրոկրատաբար և վերնից-ներքև սկզբունքով, ինչի արդյունքում դրանք կասկածանքով, իսկ երբեմն նաև ակնհայտ թշնամությամբ են ընդունվում դասախոսների և ուսանողների կողմից: Ավելին, գործընթացի ուղղաձիգ և բյուրոկրատական բնույթը, ինչպես նաև բաց երկխոսության և խորհրդակցությունների բացակայությունը, շատ են դժվարեցնում այն մարդկանց գործը, ովքեր պետք է կյանքի կոչեն ռեֆորմները առանց հասկանալու դրանց էությունն ու նպատակը: Օրինակ, մեզ հետ հանդիպած դասախոսներից մեկը նշեց, որ ֆակուլտետի ղեկանի գործավար-քարտուղարը հիմնական դեմքն է դարձել որակի ապահովման բոլոր գործընթացների իրականացման գործում: Նա կապվում է դասախոսների հետ հեռախոսով կամ գրավոր տեղեկացնում է նրանց «որակի ապահովման» հրատապ խնդիրների մասին: Հինգ տարվա մեջ որևէ ընդհանուր ժողով չի գումարվել ֆակուլտետի աշխատակիցներին որակի ապահովման հետ կապված պլաններին ծանոթացնելու, էլ չենք ասում՝ նրանց հետ խորհրդակցելու, համար:

Չնայած բազմաթիվ անհատներ բարձրագույն կրթության համակարգում (խոսքը հիմնականում վերաբերում է դասախոսներին և վարչական աշխատողներին) լավ հասկանում են, որ Հայաստանում բոլոնյան ռեֆորմների հիմնական նպատակը ներկայումս որակի ապահովումն է, նրանք վստահ չեն, որ այս բաղադրիչի գծով ռեֆորմների իրականացումը թույլ կտա ստանալ ավելի լավ արդյունքներ, քան գործընթացի այլ բաղադրիչներից:

Ինչպես դրա մասին կնշվի ստորև՝ «III.1.e» բաժնում, ուսանողների և դասախոսների շրջանում բոլոնյան ռեֆորմների մասին պատկերացումը սխալ է և միակողմանի, գործընթացի ընկալումն ամբողջական չէ, իսկ արտահայտված կարծիքները վերաբերում են միայն նեղ, տեխնիկական հարցերի, որոնք իրական կապ չունեն բարեփոխման ծրագրի հետ: ***Բոլոնյան գործընթացի և բարեփոխումների մասին տեղեկատվության պակասը Հայաստանում ակնհայտ է:***

Միննույն ժամանակ, բոլոնյան ռեֆորմները համակարգում շատերի կողմից ընկալվում են որպես բյուրոկրատական, վերնից-ներքև ընթացող գործընթաց, որը պարտադրում է կուրորեն ընդօրինակել ինչ-որ արտասահմանյան մեթոդներ: Արդյունքում, *շատ քչերն են ընդունում բոլոնյան ռեֆորմները որպես իրենց շահերից բխող բարեփոխում: Այս հանգամանքն իր հերթին էապես փոքրացնում է ռեֆորմների բարեհաջող ավարտի հավանականությունը:* Բարձրագույն կրթության ոլորտի հիմնական դերակատարները, նույնիսկ բոլոնյան գաղափարների համակիրները, չեն ընկալում բոլոնյան գործընթացը որպես «իրենցը»: Փոխարենը գործընթացն ընկալվում է որպես քաղաքական ռեժիմի կողմից պարտադրված ծրագիր, որը ենթակա չէ քննարկման կամ ադապտացման տվյալ երկրի պայմաններին՝ ելնելով առկա ծրագրերից, միջոցներից և (կամ) գործող մեխանիզմներից: Ոլորտի հիմնական դերակատարներից շատերը համարում են այս երևույթը որպես ոլորտի ծրագրային քաղաքականությունը սահմանափակող մոդել, որը կարող է բացասաբար անդրադառնալ Հայաստանի ընդհանուր ծրագրային քաղաքականության վրա:

### **III.1.c. Քաղաքական ռեժիմի կողմից իրականացվող անհամաչափորեն ինտենսիվ վերահսկողությունը**

ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի հետ առնչություն ունեցող անձանց հետ գրեթե բոլոր քննարկումների ժամանակ ջրի երես են դուրս եկել մի շարք կարևոր հարցեր: Թերևս դրանցից ամենազարմանալուն այն էր, որ պետությունը չափից ավելի շատ է միջամտում ու բոլոր մակարդակներով վերահսկում բարձրագույն կրթության համակարգը: Հայաստանի քաղաքական ռեժիմի ցուցաբերած հետաքրքրությունը բարձրագույն կրթության համակարգի նկատմամբ հիացմունքի է արժանի և տեսականորեն կարող է բերել դրական արդյունքների: Ցավոք սրտի այս հետաքրքրվածությունն արտահայտվում է չափից ավելի ինտենսիվ վերահսկողությամբ: Բացի այդ, դժվար կլինի արդյունավետորեն իրականացնել բոլոնյան ռեֆորմները այս պայմաններում, երբ առկա է լիազորությունների չհավասարակշռված կառուցվածք և քաղաքական ռեժիմի նման միջամտություն բարձրագույն կրթության համակարգի գործերին: Բոլոնյան գործընթացը ծնունդ է առել դեմոկրատական հասարակարգում և նախատեսված է դեմոկրատական հասարակարգերի համար: Դրա բարեհաջող իրականացման համար անհրաժեշտ է (բայց ոչ բավարար), որ ոլորտում գործող տարբեր անձանց միջև լինի լիազորությունների հավասարակշռված համակարգ, իսկ բուհերն ունենան որոշակի ինքնավարություն:

Ռեժիմի անհամաչափորեն ինտենսիվ վերահսկողությունը բարձրագույն

**կրթության համակարգի** նկատմամբ կարող է ցուցադրվել հետևյալ օրինակներով.

- Յուրաքանչյուր պետական ԲՈՒՀ-ի խորհրդում կա անդամ իշխանական մարմիններից (այս ցանկը ներառում է՝ Նախագահին, Նախագահի աշխատակազմի ղեկավարին, Ազգային ժողովի նախագահին, Վարչապետին, կրթության նախարարին), որը նախագահում է խորհուրդների նիստերը: Խորհուրդներն, իրենց հերթին, հանդիսանում են ԲՈՒՀ-երի գերագույն մարմինները: Քաղաքական ռեժիմի ներկայացուցիչների ազդեցության մակարդակը այս դերում կարող է դեպքից դեպք տարբեր լինել, բայց նման դրվածքն ինքնին սահմանափակում է հիմնարկի ինքնավարությունը, խաթարում դրա արդյունավետ կառավարումը: Վերջերս Համաշխարհային բանկը, քննադատելով գործերի նման կացությունը, կազմել է ԲՈՒՀ-երի խորհուրդները նախագահող բարձրաստիճան պաշտոնյաների ցանկը (տես ստորև ներկայացված աղյուսակը):
- Բարձրաստիճան պետական պաշտոնյաներ կան նաև Որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) կառավարման խորհրդում, ինչպես նաև մի շարք միջազգային համալսարանների խորհուրդներում: Սա այն դեպքում, երբ այդ համալսարանները ենթադրաբար պետք է որ ունենային անկախ կարգավիճակ: Չնայած ՈԱԱԿ-ը ստեղծվել է «Որակի ապահովման եվրոպական ստանդարտների և ուղեցույցների» հիման վրա, որոնցով պահանջվում է, որ Կենտրոնն անկախ լինի կառավարությունից, Վարչապետը հանդիսանում է ՈԱԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահը: Այս կարգավիճակում նա ուղղակիորեն մասնակցում է ՈԱԱԿ-ի կառավարման ու պլանավորման գործընթացին՝ երբեմն մերժելով կարևոր փոփոխություններ և ծրագրեր: Ավելին, այստեղ կա շահերի թաքնված բախում, քանի որ ՈԱԱԿ-ը պետք է հավատարմագրման գործընթաց անցկացնի Պետական մանկավարժական համալսարանում, որի խորհրդի նախագահը նույնպես ինքը Վարչապետն է: Այս խարվիճակը կարելի է հեշտությամբ շտկել, դրա համար պահանջվում է միայն քաղաքական կամք:
- Պետական վերահսկողության հետ կապված մեկ այլ խնդիր ընկած է նորմատիվ իրավական դաշտում: Ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը և՛ չափից ավելի իմպերատիվ է, և՛ հավակնոտ (իսկ դրույթներն ու ակտերը երբեմն հակասում են իրար): Գործող օրենսդրությամբ փորձ է արվում կարգավորել գրեթե յուրաքանչյուր ԲՈՒՀ-ական գործառույթ՝ սկսած ուսումնական ծրագրերի մշակումից ու հաստատումից մինչև կադրերի կառավարում, և սկսած ընդունելությունից մինչև բյուջեի մշակում և ֆինանսների կառավարում: Մինևույն ժամանակ, իրավական

դաշտի անորոշությունը մեկ այլ գործոն է, որը թույլ է տալիս պետությանը իր կամքը թելադրել ԲՈՒՀ-երին: Բարձրագույն կրթության ոլորտը կարգավորվում է մի շարք անորոշ և իրար հակասող ակտերով<sup>8</sup>: Բարձրագույն կրթության մասին հիմնական իրավական ակտերը 1999 թվականին ընդունված «Կրթության մասին» օրենքն է և 2004 թվականին ընդունված «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքը: Մակայն, 2001 թվականին ընդունված «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» և «Պետական կառավարչական հիմնարկների մասին» օրենքները նույնպես կիրառելի են բուհերի նկատմամբ՝ մեծ թվով անորոշ հարցեր թողնելով պետության և բուհերի միջև հարաբերություններում: Ավելին, կրթության և գիտության նախարարության 2002 թվականի կանոնադրությամբ սահմանվում է, որ պետությունն ըստ էության վերահսկում է (իր կամքն է թելադրում) ԲՈՒՀ-երին: Օրենսդրությունը ներկայումս վերանայվում է, սակայն գործընթացը թափանցիկ չէ, ինչպես մեզ հայտնեցին հարցազրույցներին մասնակցած դասախոսներից և կառավարիչներից շատերը:

- Պետությունն ուղղակիորեն վերահսկում է պետական բուհերի բյուջեները չնայած այն հանգամանքին, որ պետական հատկացումների մասնաբաժինը շատ փոքր է: Պետական բուհերը պետբյուջեներից ստանում են միայն իրենց միջոցների 9 - 30%. մնացածը գալիս է ուսանողների կողմից կատարվող վճարներից: *Ելնելով ֆինանսավորման աղբյուրներից, Հայաստանի բարձրագույն կրթության համակարգը աշխարհում ամենից մասնավորեցված կրթական համակարգն է, այն դեպքում, երբ դրա կառավարումը շարունակում է մնալ պետական:* Ինչպես դա նշեցին հարցազրույցներին մասնակցած անհատներից շատերը, հայկական բուհերը «պետական» են միայն կառավարման, այլ ոչ թե ֆինանսավորման մասով:
- Քաղաքական ռեժիմը Հայաստանից դուրս չի ընկալվում որպես ռեպրեսիվ բարձրագույն կրթության ոլորտում: Այն կարողանում է լավ հարաբերություններ հաստատել միջազգային կազմակերպությունների և հայկական սփյուռքի հետ:

Հետևյալ աղյուսակը վերցված է Համաշխարհային բանկի «Կառավարման հետ կապված հարցերը Հայաստանի բարձրագույն կրթության ռեֆորմների

<sup>8</sup> Համաշխարհային բանկ, 2013թ. «Կառավարման հետ կապված հարցերը Հայաստանի բարձրագույն կրթության ռեֆորմների կենտրոնում», Երևան, ՀԲ, էջ 9-10.  
<http://documents.worldbank.org/curated/en/2013/01/17748657/addressing-governance-center-higher-education-reforms-armenia>

կենտրոնում» վերնագրով հաշվետվությունից (էջ 27)՝:

**Պետական ԲՈՒՀ-երի խորհուրդների նախագահները**

պետական ԲՈՒՀ	խորհրդի նախագահ
Երևանի պետական համալսարան	ՀՀ Նախագահ
Երևանի պետական լեզվաբանական համալսարան	ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավար
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան	Ազգային ժողովի նախագահ
Պետական մանկավարժական համալսարան	ՀՀ Վարչապետ
Պետական ճարտարագիտական համալսարան	Ազգային ժողովի նախկին նախագահ
Հայաստանի պետական ագրարային համալսարան	Քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահ
Երևանի պետական բժշկական համալսարան	Կրթության և գիտության նախարար
Պետական կոնսերվատորիա	ՀՀ նախկին դեսպանը ՌԴ-ում
Ճարտարապետության և շինարարության պետական համալսարան	Երևանի քաղաքապետ
Հայաստանի ֆիզկուլտուրայի պետական ինստիտուտ	ԱԺ երկրորդ ամենամեծ քաղաքական խմբակցության ղեկավարը
Գորիսի պետական համալսարան	Սյունիքի մարզպետ

*Աղբյուր՝ համապատասխան բուհերի պաշտոնական կայքերը:*

**III.1.d. Բարձրագույն կրթության հարցերի շուրջ բաց հանրային քննարկումների պակասը**

Նախորդ բաժնում քննարկված՝ պետության չափազանցված միջամտությանը վերաբերող խնդրի հետ կապված կա մեկ այլ խնդիր, որը բազմիցս

<sup>9</sup> Հաշվետվության ինչպես հայերեն, այնպես էլ անգլերեն տարբերակները տեղադրված է Համաշխարհային բանկի ինտերնետային կայքում՝ <http://documents.worldbank.org/curated/en/2013/01/17748657/addressing-governance-center-higher-education-reforms-armenia>

շոշափվել է հարցազրույցների ժամանակ. դա բարձրագույն կրթության հարցերի շուրջ հանրային բաց քննարկումների պակասը կամ բացակայությունն է: Ընդհանուր առմամբ, բարձրագույն կրթության ոլորտի հիմնական գործող անձինք սովոր չեն հանրության հետ քննարկելու ոլորտի և դրանում իրականացվող ռեֆորմների խնդիրները: Հարցազրույցներին մասնակցած անհատներից շատերը դժվարանում էին արտահայտելու իրենց կարծիքները, քանի որ նրանք սովոր չեն, որ իրենցից կարծիք են հարցնում ոլորտի հիմնախնդիրների վերաբերյալ: Իսկ երբ իրենց հարցնում էինք, թե ում են սովորաբար հայտնում իրենց մտահոգությունը առօրյա աշխատանքում հանդիպող պրոբլեմների մասին, նրանք հեզմաբար պատասխանում էին՝ «մեզ»:

Չկա մի որևէ ամբիոն կամ ֆորում որտեղ ԲՈՒՀ-երի աշխատողները և շահագրգիռ այլ անձինք կարողանային միմյանց հետ կառուցողական մթնոլորտում բացելիքաց քննարկել բարձրագույն կրթության ոլորտում տիրող իրավիճակը և իրենց ամենօրյա մասնագիտական խնդիրները: Որպես կանոն դասախոսները խուսափում են բաց և անկեղծ հայտարարություններ անելուց՝ վախենալով, որ իրենց նկատմամբ պատժամիջոցներ կկիրառվեն: Գրանցվել են դեպքեր, երբ դասախոսների աշխատանքային պայմանագրերը չեն երկարաձգվել, երբ նրանք բարձրաձայն իրենց մտահոգություններն են հայտնել կրթական համակարգում տիրող իրավիճակի վերաբերյալ:

Ուսանողները նույնպես չունեն բանավեճի համապատասխան հարթակներ, ինչպես իրենց ԲՈՒՀ-երում, այնպես էլ՝ ազգային մակարդակով, իրենց կարծիքներն արտահայտելու և (կամ) իրենց հուզող հարցերը բարձրացնելու համար: Այնուամենայնիվ, այս հարցում կարծես վերջերս որոշ առաջընթաց է գրանցվել, և դրա մասին կխոսվի ստորև «ուսանողների» բաժնում: Իրավիճակը մի փոքր այլ է Գավառի համալսարանում, որտեղ ռեկտորն իրականացնում է «բաց դռների» քաղաքականություն և խրախուսում ուսանողներին բարձրաձայնելու իրենց հուզող հարցերն ու մտահոգությունները: Մեր այցելած բոլոր բուհերում սա կարծես միակ դեպքն է:

Այս առնչությամբ մեկ այլ կարևոր խնդիր է այն, որ ուսանողներն ու իրենց ծնողները, ովքեր ֆինանսավորում են ԲՈՒՀ-երի ծախսերի մինչև 90%-ը, գաղափար չունեն, թե ինչպես են ծախսվում իրենց կողմից վճարված գումարները: Որոշ փաստաթղթեր բյուջեների վերաբերյալ կան, բայց դրանք չեն հրապարակվում բաց հանրության համար: Հետևաբար, չի կարող լինել որևէ բաց քննարկում ԲՈՒՀ-երի բյուջեների ձևավորման վերաբերյալ:

Նույնիսկ այն դեպքերում, երբ ուսանողներն ու դասախոսները բողոքում են այնպիսի էլեմենտար հարցերի շուրջ, ինչպես օրինակ՝ բուհական գույքի մաշվածությունը, նրանց որևէ տեղեկություն չի տրվում այն մասին, թե ինչպես են օգտագործվում ԲՈՒՀ-ի բյուջեի միջոցները այդ խնդիրը լուծելու համար:

*Նման բաց քննարկումների պակասը կամ բացակայությունը, սեփական ԲՈՒՀ-ի ապագայի կառուցման հարցում որևէ մասնակցություն ունենալու հնարավորության բացակայությունը ուսանողների, դասախոսների և վարչական աշխատողների մոտ, ինչպես նաև պետության ինտենսիվ միջամտությունը հանրային քննարկումների հետ կապված հարցերում, վնասում են ռեֆորմների գործընթացին:* Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի և դրա ապագայի վերաբերյալ կարևոր հարցերի քննարկումը տեղ է գտնում ոչ թե բաց ամբիոնների վրա, այլ համացանցի «ընդհատակյա» ֆորումներում: Այս իրավիճակը հասարակությունում առաջացնում է որոշակի լարվածություն, որն օր-օրի ավելի շատ է զգացվում հանրապետությունում:

**III.1.e. Ռեֆորմների բովանդակության և էության մասին տեղեկատվության և հասարակական ընկալման պակաս: Բոլոնյան ռեֆորմները որպես «օտար» գործընթաց ընկալելու խնդիրը**

Ինչպես դասախոսները և ուսանողները, այնպես էլ ընդհանուր հասարակությունը, հստակ պատկերացում չունեն Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի ռեֆորմների և բոլոնյան գործընթացի մասին: «Բոլոնյա» ասելով շատերը հասկանում են միայն առանձին ռեֆորմների երկրորդական բաղադրիչները: Օրինակ, հարցազրույցին մասնակցած խմբերից մեկում ուսանողները կարծում էին, որ «Բոլոնյան գործընթացը» դա ընդամենը քննությունների նոր ձևաչափ է, որ վերջերս սկսել է կիրառվել Հայաստանում (իսկ իրականում դա ոչ մի առնչություն չունի բոլոնյան գործընթացի հետ): Ուրիշ ոչինչ նրանք չկարողացան ասել բոլոնյան գործընթացը նկարագրելու համար: Մա շատ վառ օրինակ է երևույթների սահմանափակ պատկերացման և խեղված ընկալման: Հարցազրույցներին մասնակցած շատ դասախոսներ զարմանք արտահայտեցին «ուսուցման արդյունքներ» հասկացության կապակցությամբ, այնինչ դա առանցքային հասկացություն է, որ վերջերս է «ներմուծվել» բոլոնյան ռեֆորմների շրջանակներում: Նրանց համար անհասկանալի էր ոչ միայն «ուսուցման արդյունքների» նպատակը, այլ նաև հենց բուն հասկացության իմաստը: Այսպիսի օրինակները ցույց են տալիս, որ բոլոնյան գործընթացը և դրա ընդհանուր բովանդակությունը չեն մեկնաբանվել լայն հասարակության համար և չեն ադապտացվել բարձրագույն կրթության ազգային համատեքստում՝ դրանք ավելի պարզ ու հեշտ ընկալելի դարձնելու համար: Դասախոսների, ուսանողների և վարչական աշխատողների մեծամասնությունը չեն հասկանում ռեֆորմների ընդհանուր նպատակները: Շատերն ընկալում են բոլոնյան գործընթացը որպես բյուրոկրատական ուղղաձիգ պրոցես, որի նպատակը մի շարք գուտ տեխնիկական նորարարություններ մտցնելն է (տես



III.1.b. բաժինը):

Բոլոնյան գործընթացը և ռեֆորմները նկարագրող հիմնական «տեսանկյուն» բաղադրիչները շատերի համար նոր ձևաթղթերն ու մեխանիզմներն են, ինչպես օրինակ՝ կրեդիտային համակարգը, գիտական աստիճանների առաստիճան համակարգը կամ հավատարմագրման գործընթացում օգտագործվող ձևաթղթերն են: Բոլոնյան գործընթացի մասին նման պատկերացման պատճառ կարող է լինալ նաև այն հանգամանքը, որ իշխանությունները հենց սկզբից շեշտը դրել էին ռեֆորմների առանձին բաղադրիչների, այլ ոչ թե համապարփակ և սկզբունքային մոտեցման վրա: Բացի դրանից, բոլոնյան ռեֆորմների շրջանակներում չի իրականացվել հասարակայնության հետ կապերի կանոնավոր և լայնամասշտաբ ծրագիր: Չնայած որոշ փորձեր արվել են բոլոնյան ռեֆորմների ճիշտ ընկալումը խրախուսելու համար (ԲՀՀ-ն ֆինանսավորել դրանցից մի քանիսը), բայց դրանք եղել են մեկուսացված նախաձեռնություններ, որոնք սահմանափակվել են թեմատիկ շրջանակներով:

***Գործընթացին ավելի լավ տեղեկացված անհատները բոլոնյան ռեֆորմների հետ կապված հիմնական խնդիրը տեսնում են նրանում, որ ռեֆորմների առանձին բաղադրիչներ պարզապես կրկնօրինակվել են առանց փորձ անելու բացատրել կամ ադապտացնել դրանք: Հետևաբար, քիչ հավանական է, որ դրանք ճիշտ ընկալվեն կամ աշխատեն:*** Մա բոլոնյան ռեֆորմների ներկայիս ցածր վարկանիշը հանրության մոտ և դրանց իրականացման «ոչ համոզիչ» ընթացքը բացատրող ամենից հաճախ առաջարկվող բացատրություններից է:

Բոլոնյան ռեֆորմների ոչ ճիշտ ընկալումը և այն հանգամանքը, որ դրանք դիտվում են որպես վերնից-ներքև պարտադրվող փոփոխություններ, որոնք ադապտացված չեն տեղական կարիքներին և իրականությանը, բերում են այդ փոփոխությունների ***օտարացմանը:***

Այս առումով առանձնակի հետաքրքրություն է առաջացնում ***տեղաշարժի ազատության*** ընդլայնման ծրագիրը բոլոնյան գործընթացի շրջանակներում: «Էրազմուս» ծրագիրը և տեղաշարժի ազատության ընդլայնման այլ հնարավորությունները հայտնի չեն Հայաստանում. դրանք բավականաչափ թափանցիկ և հասանելի չեն շահագրգիռ անձանց և լայն հասարակությանը: Տեղաշարժի ազատությունը, որպես բոլոնյան գործընթացի բաղադրիչ մաս, բավարար չափով չի քննարկվում Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում, չնայած այն բանին, որ դա գործընթացի առանցքային բաղադրիչներից մեկն է, իսկ արտասահմանում սովորելու հնարավորությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում Հայաստանում: ***Անցկացված հարցազրույցները հաստատում են այն ենթադրությունը, որ բոլոնյան գործընթացի ժողովրդականության ներկայիս***

*ցածր մակարդակը կբարձրանա, եթե մարդիկ համակարգի ներսում, մասնավորապես՝ ուսանողները, ավելի լավ ծանոթանան այն հնարավորություններին, որ տալիս է բոլոնյան գործընթացը կապված տեղաշարժի ազատության հետ:*

**III.1.f. Ռեֆորմները կրում են ձևական բնույթ և խցանվում են համակարգում: Դրանք բուհական բյուրոկրատիայի բարձր և միջին մակարդակներից այն կողմ չեն գնում:**

Հարցազրույցներին մասնակցած անհատներից շատերը և բարձրագույն կրթության գրեթե բոլոր փորձագետները արտահայտեցին այն կարծիքը, որ չնայած բավականին գործ արվել է համակարգի մակարդակով կառուցվածքային փոփոխությունների գծով, «ստորին մակարդակներում» գործընթացի իրականացումն արդյունավետ չի եղել: Ըստ էության, բուն կրթական միջավայրում շատ քիչ բան է փոխվել, իսկ դրական փոփոխություններն է՛լ ավելի քիչ են: Կան կարծիքներ, որ բոլոնյան ռեֆորմները դասախոսներին և ուսանողներին չեն հասնում և, հետևաբար, չեն բարելավում ուսումնական միջավայրը, որովհետև դրանք «լռվում են» համակարգում՝ չկարողանալով անցնել բյուրոկրատիայի վերին և միջին շերտերի միջով:

Ռեֆորմների վատ արդյունքների պատճառների թվում հիմնականում նշվում են բյուրոկրատական և «վերևից ներքև» մոտեցումը, ինչպես նաև բարեփոխումների համար նախատեսված համեմատաբար արագ տեմպերը: Իրականում, ոմանք փոփոխությունները դիտում են որպես արհեստական՝ «միայն թղթի վրա գրված ռեֆորմներ»: Այս տեսակետը հաստատվեց նաև տարբեր բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսական կազմի առանձին անդամների և ուսանողների հետ զրույցներում: Ղեկավար պաշտոններ չգրադեցնող ակադեմիական անձնակազմի անդամների կողմից շատ դեպքերում բոլոնյան փոփոխությունները դիտվում են որպես բյուրոկրատիզմի և ֆորմալ ձևակերպումների ևս մեկ լրացուցիչ բեռ, ինչը նրանցից պահանջվում է ի լրումն իրենց ամենօրյա աշխատանքների, և որպես օրինակ նշում են ավելի շատ քննություններ անցկացնելու, ավելի շատ ձևաթղթեր լրացնելու նոր պահանջները, և այլն: Մյուս կողմից, որոշ ուսանողներ տեղյակ են, թե բոլոնյան բարեփոխումներով ինչ փոփոխություններ են ներմուծվելու բարձրագույն կրթության իրենց պրակտիկայում, սակայն գործնականում շատ քիչ տարբերություններ են նկատում: Ռեֆորմների բյուրոկրատական բնույթի ապացույցն է նաև այն հանգամանքը, որ ո՛չ իրենց ամենօրյա մասնագիտական աշխատանքի բերումով, ո՛չ էլ հասարակական ասպարեզում ուսանողները և դասախոսները ներգրավված չեն ռեֆորմների

գործընթացում, բացառությամբ մակերեսային բնույթի ներգրավվածության: Այս իրավիճակի հետևանքով ձևավորվում է այնպիսի ընկալում, թե «սրանք մեր ռեֆորմները չեն», այլ ինչ-որ օտարամուծություն են, որը փորձ է արվում պարտադրել բյուրոկրատական ճանապարհով:

*Վերը նկարագրված երեք առանձնահատկությունները, այն է՝ հանրային քննարկումների բացակայությունը, ռեֆորմների նպատակների մասին պատկերացում չունենալը և ուսանողների ու դասախոսների մասնակցության պակասը միասին վերցված հանգեցնում են բարձրագույն կրթության ոլորտում փոփոխությունների հարցում էնտուզիազմի զգալի բացակայությանը, ինչպես նաև հուսալքություն են առաջացնում, թե որևէ էական բան կարող է փոխվել:*

### **III.1.g. Միջազգային կազմակերպությունների դերը**

Հայաստանում բարձրագույն կրթության համակարգին բնորոշ առնանահատկություններից մեկն այն է, որ այս ոլորտում ակտիվ գործունեություն ծավալող բազմաթիվ միջազգային կազմակերպություններ կան: Նրանք բոլորը իրենց լուրջ ներդրումն ունեն բարձրագույն կրթության համակարգի բարեփոխումների գործում: Կազմակերպությունների մի մասն ավելի շատ ուժ է ազդեցություն ունի, իսկ մյուս մասն՝ ավելի քիչ: Բարեփոխումների հետ կապված նրանց դերը և առաքելությունը, ինչպես նաև ազդեցությունը շատ տարբեր են: Այդ կազմակերպություններից շատերը, թերևս խուսափում են հրապարակայնորեն ընդլվզել ստեղծված իրականության, այն է՝ Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում բոլոնյան բարեփոխումների մինչ օրս արձանագրած շատ քիչ առաջընթացի դեմ: Նման մոտեցումը մասամբ պայմանավորված է այդ կազմակերպությունների իրավական կարգավիճակով և լիազորություններով: Օրինակ, թե՛ Համաշխարհային բանկը, և թե՛ ԵՄ կառույցները պարտավորված են պետության հետ համագործակցելու իրավական պարտավորություններով: Այլ դեպքերում նրանք շատ զգալի ներդրում և մասնակցություն են ունենում՝ լինի դա ռեսուրսների և փորձագիտական բազայի (ֆինանսական, մասնագիտական) տրամադրման, թե՛ համաշխարհային մասշտաբով կապող օղակի դեր ունենալու միջոցով: Բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումների հիմնական խոչընդոտող տարրերի՝ օրինակ, քաղաքական ռեժիմի ինտենսիվ վերահսկողության մասին հրապարակայնորեն բարձրաձայնելու հարցում միջազգային կազմակերպությունների հարաբերական լուրջությունը թերևս ավելի շատ «արջի ծառայություն» է բարձրագույն կրթության ոլորտի և երկրի համար: Միջազգային կազմակերպություններն առանձին-առանձին, միմյանց և կառավարության հետ համագործակցության

միջոցով իսկապես կարող են նպաստել նրան, որ Հայաստանում բարձրագույն կրթությունը դրվի բարեփոխումների ու զարգացման ճիշտ ուղու վրա: Նրանց ներկայիս որոշ գործողությունները, որքան էլ որ բխեն լավ մտադրություններից, և հատկապես ստեղծված իրավիճակի շուրջ հասարակության հարաբերական լռությունը կարող են բերել այս իրավիճակի արմատավորմանը: Համաշխարհային բանկի՝ վերը նշված հաշվետվությունը թերևս լուրջ քայլ է այս ուղղությամբ, ինչը պետք է աջակցվի և վերահաստատվի հետագա պարտավորվածությամբ և նախաձեռնություններով:

### **III.1.h. Զանգվածային արտագաղթ**

Ըստ եղած տեղեկությունների, դեռ անցյալ տարի ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը, դիմելով երիտասարդ գիտնականներին, ասել էր՝ «Ավելի լավ է, որ դու՝ որպես փայլուն ու հեռանկարային ֆիզիկոս, գնաս Չիկագո կամ Բոստոն ու դառնաս այդպիսի ֆիզիկոս: Հետո իմ երկրին ավելի շատ օգուտ կարող ես տալ քո կապերով, հմտություններով, քո գրանտերով և այլն, քան մնաս այստեղ կրտսեր լաբորանտ, եթե պետությունը այսօր՝ այս պահին, ամբողջական շղթան քո առաջխաղացման չի կարող ապահովել:»<sup>10</sup> Թերևս լավագույն մտադրություններով արված այս մոայլ և ոչ հուսադրող հայտարարության մեջ արտացոլված է որակյալ կադրերի արտահոսքի համակարգային պրոբլեմը:

Զնայած դժվար է ճշգրիտ տվյալներ ներկայացնել միգրացիոն հոսքերի վերաբերյալ, այնուամենայնիվ, պարզ է՝ որ արտագաղթի կապակցությամբ Հայաստանը լուրջ պրոբլեմների առջև է կանգնած: Համաշխարհային բանկի ներկայացրած՝ միգրացիայի վերաբերյալ պաշտոնական տվյալները ցույց են տալիս, որ 2008-ից 2012 թվականների ընթացքում 75.000 մարդ մեկնել է երկրից:<sup>11</sup> Մինչդեռ, օդային փոխադրամիջոցներով, երկաթուղով կամ ավտոճանապարհներով երկիր ժամանող և երկրից մեկնող մարդկանց հարաբերակցության հաշվարկը ցույց է տալիս, որ բավականին մեծ թվով՝ մոտ 42.800 մարդ 2012 թվականին մեկնել է երկրից անվերադարձ:<sup>12</sup> Այս ցուցանիշը նվազել է 2010 թվականին արձանագրված 46.700-ից: Ըստ ԵԱՀԿ գրասենյակի<sup>13</sup> իրականացրած ուսումնասիրության արդյունքների, 2002-ից մինչև 2005

<sup>10</sup> Դանիել Բոաննիսյան, 2012թ., «Կառավարության կոչը գիտնականներին. գնացեք եւ երկրից», Հետք, <http://hetq.am/eng/articles/21004/government-advice-to-scientists---leave-this-country.html>

<sup>11</sup> Համաշխարհային բանկ, «Զուտ միգրացիայի վիճակագրություն»

<sup>12</sup> Միգրացիոն պետական ծառայություն, 2013թ. [http://www.smsmta.am/?menu\\_id=18](http://www.smsmta.am/?menu_id=18)

<sup>13</sup> Ա. Մինասյան, Բ. Հանչիլովա «Աշխատանքային միգրացիան Հայաստանից 2002-2005թթ», տնային տնտեսությունների սոցիոլոգիական հետազոտություն, Երևան, ԵԱՀԿ, էջեր 34-35

թվականն ընկած ժամանակահատվածում երկրից արտագաղթածների մեկ հինգերորդը (18.8%) ունի բարձրագույն կրթական աստիճան: Նույն ուսումնասիրության մեջ նշվում է, որ բարձրագույն կրթական աստիճան ունեցող ընդհանուր բնակչության 5,7 տոկոսը մեկնել է երկրից: Բոլորվին վերջերս «Գելափ» կազմակերպության կողմից նախկին Խորհրդային Միության 12 երկրներում 15 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց շրջանում անցկացված՝ «գաղթելու ցանկության» վերաբերյալ ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ի տարբերություն բոլոր 12 երկրներում արձանագրված միջինում 15 տոկոս ցուցանիշի՝ մշտական հիմունքներով այլ երկրներ արտագաղթելու ցանկություն ունեցող հայաստանցիները կազմում են 40 տոկոս:<sup>14</sup> ***Ամփոփելով, կարելի է ասել, որ զգալի թվով բարձրագույն կրթություն ունեցողներ ամեն տարի մեկնում են երկրից: Ավելի մտահոգիչ է այն հանգամանքը, որ մեկնողների թիվը վերջին տարիներին թերևս գնալով ավելացել է:***

***Թեև միգրացիան երկրի առջև ծառայած խնդիր է, մինևույն ժամանակ կարող է լինել նաև որոշ հնարավորությունների աղբյուր:*** Դրա մասին ամենավառ կերպով վկայում են այն հսկայական ծավալով դրամական փոխանցումները, որոնցով գոյատևում է ինչպես երկիրը, այնպես էլ որոշ ԲՈՒՀ-եր: Ավելին, Արևմտյան Եվրոպա կամ ԱՄՆ գնացածներից շատերը միավորվում են՝ կազմակերպելով շրջանավարտների ասոցիացիաներ: Այդ միավորումներից շատերը բավականին մեծ քաղաքացիական ակտիվություն են ցուցաբերում տարբեր հարցերում, գիտակցելով իրենց՝ որպես փոփոխությունների լուրջ գործոն և շարժիչ ուժ լինելու դերը: Բարեփոխումներին կողմնակից անհատների շարքերն ընդլայնելու նպատակով Հայաստանի ներսում բարփոխումների ջատագովները, այդ թվում՝ ԲՀՀ-ն, կարող են հաշվի առնել երկրի սահմաններից դուրս ակտիվ գործունեություն իրականացնող այդ խմբերի ու միավորումների հետ համատեղ աշխատանքներ իրականացնելու հնարավորությունները:

### **III.1.i. Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում առկա կրթական մոդելը**

Ուսումնասիրության շրջանակներում մենք փորձել ենք հասկանալ և պատկերացում կազմել, թե ինչպիսին է «կրթական մոդելը» ներկայիս հայաստանյան բարձրագույն կրթության ոլորտում: Կրթական մոդել ասելով հասկանում ենք, թե բարձրագույն կրթության գործընթացում ինչպես են ուսուցանվում ուսանողները, կամ որոնք ենք ուսուցման և ուսումնական տիպային ծրագրերի հիմնական խնդիրներն ու նպատակները: Եվ այդ փորձի արդյունքում բացահայտել ենք հետևյալ առանձնահատկությունները՝

<sup>14</sup> <http://www.gallup.com/poll/161591/desire-leave-fsu-ranges-widely-across-countries.aspx>

- կրթական մոդելը հիմնված է տեսական, եթե ոչ՝ վերացական, ուսուցման վրա, ուսումնական ծրագրերում շատ քիչ տեղ է հատկացվում գործնական պարապմունքներին (ուշադրության արժանի բացառություններ կան միայն որոշ ֆակուլտետներում և բաժիններում),
- գոյություն չունի համակարգային մոտեցում կրիտիկական կամ ստեղծագործական մտածողություն սերմանելու և զարգացնելու նկատմամբ: Գերակշռող և լայն տարածում ունեցող մոդելն այն է, որ դասավանդումն իրականացվում է «անառարկելի ու դոգմատիկ» (*ex-cathedra*) դիրքերից, իսկ ուսանողներից պահանջվում է վերաբարձրել այն, ինչ լսել են դասախոսներից,
- բարձրագույն ուսումնական հաստատություններում գրեթե անտեսված են գիտահետազոտական աշխատանքները. առկա է շատ խիստ սահմանազատում դասավանդման և գիտահետազոտական աշխատանքի միջև,
- հսկայական անդունդ առաջացնող տարանջատվածություն կա բարձրագույն կրթության և աշխատաշուկայի միջև,
- ուսումնական առաջադիմությունն ընդունելի է, բայց չի խրախուսվում,
- շատ դասախոսների և ուսանողների, ինչպես և լայն հասարակության գերակշռող մեծամասնության համար բարձրագույն կրթության դիպլոմը գնահատվում է գլխավորապես որպես ծառայողական առաջխաղացման հնարավորություն տվող մի վկայական կամ փաստաթուղթ, այլ ոչ թե որպես բարձրագույն կրթության և գիտելիքների մասին վկայող փաստ,
- բարձրագույն կրթության դիպլոմ կարելի է ստանալ նույնիսկ առանց մեծ ջանքերի. երբեմն ոչ թե կաշառք, այլ պարզապես սովորական ուսման վարձ վճարելը լրիվ բավական է, հաշվի առնելով այն փաստը՝ որ բարձրագույն ուսումնական հաստատությունները գոյատևում են այս վարձերից գոյացած միջոցներով, ուստի՝ որպես կանոն, կրթական համակարգից դուրս չեն թողնում ուսանողներին: Ճիշտ է, լավ սովորող և ջանասեր ուսանողներին չեն ստիպում կաշառք տալ իրենց գնահատականների կամ դիպլոմների համար, սակայն նրանք կարող են տուժել կաշառք տվողների հետ անարդար մրցակցության պայմաններում,
- ուսման հանդեպ հետաքրքրություն ցուցաբերող սովորողները ստիպված են լրացուցիչ միջոցներ և ռեսուրսներ ներդնել (որոշ դեպքերում՝ մասնավոր պարապմունքների համար) երբեմն դեռ միջնակարգ կրթության վերջին տարիներից սկսած:

Բացի դրանից, գոյություն ունեն այլ հարցեր, որոնք ուղղակիորեն կարող են կապ չունենալ կրթական մոդելի հետ, սակայն միանգամայն ուղղակի ազդեցություն ունենալ դրա վրա՝

- բարձրագույն կրթության հաստատությունների անկախությունն ու ակադեմիական ազատությունները սահմանափակված են ինչպես օրենքով, այնպես էլ արմատավորված պրակտիկայով,
- կոռուպցիան համատարած և բազմաթիվ դրսևորումներ ունեցող երևույթ է՝ զգալիորեն տարածված և մեծապես ընդունելի բարձրագույն կրթության ոլորտում աշխատանքի բոլոր ասպարեզներում,
- երկիրն ունի որակյալ բարձրագույն կրթության գերազանցության խորը ավանդույթներ, ինչպես նաև որակավորված դասախոսներից, քանիմաց և իրենց գործին նվիրյալ դեկավարներից և խելացի ու աշխատասեր ուսանողներից ձևավորված հզոր ներուժ, մինչդեռ այս ներուժի վրա իրենց ազդեցությունն են թողնում բարձրագույն կրթության համակարգի նկարագիրն և ուղեղների զանգվածային արտահոսքը:

*Ընդհանուր առմամբ, կրթական մոդելը բավականին անարդյունավետ ու անհամարժեք է և որպես այդպիսին ոչ միայն չի նպաստում Հայաստանում բաց հասարակության զարգացմանը, այլ լրիվ հակառակ ազդեցություն է ունենում: Միևնույն ժամանակ բարձրագույն կրթության համակարգը գուրկ չէ այն ներուժից, որը կարող է իրական ներդրում ունենալ բաց հասարակության զարգացման հարցում, պայմանով՝ իհարկե, որ տեղի ունենան զգալի փոփոխություններ: Ի թիվս այլոց, լուրջ փոփոխություններ են անհրաժեշտ բարձրագույն կրթության բնագավառի ներկայիս կրթական մոդելում:*

### **III.1.j. Բարեփոխումների դաշտը և ուղղությունը**

Այս ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված փաստերից մեկն այն է, որ Հայաստանում բարձրագույն կրթության ոլորտում «բարեփոխումների դաշտը» փոքր է և ցրված, իսկ բարեփոխումների ուղղությունը անհստակ է ու երբեմն էլ՝ արհեստական: Այս իրավիճակը զգալի բացասական ազդեցություն է թողնում բարեփոխումների ծրագրի հաջողության և առաջընթացի վրա: ***Ուստի, առաջարկում ենք, որ ԲՀՀ-ն հիմնական ուշադրությունն ուղի բարեփոխումների համար դաշտի ձևավորմանն ու պահպանմանը, ինչպես նաև բարեփոխումների ճշմարիտ և իրական ուղղության աջակցմանը:*** Այս առաջարկությունը կարող է ուղղվել նաև այլ դերակատարների, այդ թվում՝ պետությանը: Բայց ի՞նչ նկատի ունենք «բարեփոխումների դաշտ» և «բարեփոխումների ուղղություն» ասելով:

Բարեփոխումների հաջող իրականացման և դրանց արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ է, որ իրականացնողները գործելու համապատասխան դաշտ ունենան, որը նպաստավոր լինի փոփոխություններին

ուղղված իրենց գործունեության իրականացման համար: Նման դաշտը, որը մենք առաջարկում ենք անվանել **«բարեփոխումների դաշտ»**, բաղկացած է ստորև թվարկվածների համակցությունից՝

- հայեցակարգային տարրեր (հայեցակարգեր, գաղափարներ փոփոխության բնույթի և նոր իրականության վերաբերյալ, որը նախատեսվում է ստեղծել),
- քաղաքական տարրեր (քաղաքական հավասարակշռությունը բարեփոխումների կոնկրետ ոլորտում և հասարակությունում ընդհանրապես),
- քաղաքականության և օրենսդրության տարրեր (բարեփոխումներին վերաբերող նորմատիվ իրավական դրույթներ և գործողությունների ծրագրեր);
- ինստիտուցիոնալ տարրեր (ինստիտուցիոնալ հայեցակետեր, որոնք ընդհանուր առմամբ դրականորեն կամ բացասականորեն են անդրադառնում անձանց և համապատասխան կազմակերպությունների աշխատանքի վրա. դրանք կարող են լինել՝ օրինակ, ինստիտուցիոնալ կառավարումը, ենթակառուցվածքը, աշխատանքի ընդունման ընդունված պրակտիկան, ինստիտուցիոնալ կուլտուրան և այլն):

Ուսումնասիրության արդյունքների հիման վրա արված մեր գնահատականն այն է, որ Հայաստանում բարեփոխումների դաշտը շատ փոքր է հայեցակարգի հետ կապած բոլոր ասպարեզներում: Հայաստանում բոլոնյան գործընթացի հայեցակարգային հիմքերը բավարար չափով չեն մշակվել և հստակեցվել: Հայաստանում բավարար պատկերացում չունեն բոլոնյան մոդելի տարրերի մասին ու շատ հաճախ դրանք որդեգրվում են պարզապես «կրկնօրինակման» պարզագույն և միևնույն ժամանակ որևէ օգուտ չստանալու և ոչ նպատակահարմար մեթոդով: Որևէ լուրջ հանրային քննարկումներ տեղի չեն ունենում այն հարցերի վերաբերյալ, թե ինչ է իրականում իրենից ներկայացնում բոլոնյան գործընթացը կամ բոլոնյան բարեփոխումները: Ուստի, երբ առաջարկում ենք, որ ԲՀՀ-ն և այլ շահագրգիռ կողմերը հիմնական ուշադրությունը կենտրոնացնեն բարեփոխումների համար դաշտի ձևավորման ու պահպանման վրա, մենք մասամբ նկատի ունենք, որ նրանց անհրաժեշտ է հստակություն, հետևողականություն և համապատասխանություն ապահովել հայեցակարգային հարցերում: Մինչդեռ սա մեր առաջարկության միակ և ամենակարևոր մասը չէ, քանի որ նույնքան կարևոր են նաև այլ ասպեկտները: Քաղաքական ռեժիմի կողմից ինտեսիվ վերահսկողության պայմաններում բարեփոխումների դաշտը սամանափակվում է այդ բարեփոխումների քաղաքական ասպարեզում: Քաղաքականության և օրենսդրության ասպարեզում նույնպես առկա են թերություններ, ինչը պայմանավորված է նույն քաղաքական ռեժիմի անհամաչափ ազդեցությամբ, ինչպես նաև բարեփոխումների նպաստող իրավական դրույթների ու քաղաքականության ուղղությունների խթանման և աջակցման համար անհրաժեշտ քաղաքական



կամքի բացակայությամբ: Ինստիտուցիոնալ մակարդակում նույնպես, ինչպես և ներկայացված է այս ուսումնասիրությունում, գոյություն ունեցող ինստիտուցիոնալ ենթակառուցվածքը, կառավարումը և աշխատանքի տեղավորման պրակտիկան բավականին սահմանափակ դաշտ են ապահովում բարեփոխումների համար: Բացի դրանից, նույնիսկ եթե բարեփոխումների համար անհրաժեշտ դաշտ ձևավորվում և ստեղծվում է առանձին գործող անհատների և կազմակերպությունների կողմից, ապա որպես կանոն այդ առանձին «կղզիները» կամ միջավայրերը հիմնականում փոխկապակցված չեն լինում և մնում են մեկուսացված, ինչի հետևանքով չի ստեղծվում կրիտիկական զանգված կամ բեկումնային կետ:

**«Բարեփոխումների ուղղություն»** ասելով հասկանում ենք փոփոխությունների վեկտորը: Վեկտորների շարքում կարելի է տարբերակել նախանշված վեկտորը (որդեգրված քաղաքականության և բարեփոխումների պաշտոնական ծրագրերի շրջանակներում ընդունված բարեփոխումների ուղղությունը), հայտարարված վեկտորը (բարեփոխումների իրականացման ժամանակ տարբեր դերակատարների կողմից հնչեցրած հրապարակային հայտարարություններ այդ պահին բարեփոխումների ենթադրվող և ընկալվող ուղղության վերաբերյալ, արտացոլելով տվյալ դերակատարների կոնկրետ պոտենցիալ կերպով կանխակալ դիրքորոշումը), և իրական վեկտորները, որոնք տեսականորեն կարող են վերհանվել փաստացի իրավիճակի օբյեկտիվ, չեզոք ուսումնասիրության արդյունքում:

Հայաստանում միայն պետությունն ունի փոփոխությունների վեկտորը, այն է՝ բարեփոխումների ուղղությունը սահմանելու իշխանություն, քանի որ դե ֆակտո նրան է պատկանում քաղաքականություն և իրավական ակտեր ընդունելու և իրականացնելու մենաշնորհը: Դե ֆակտո նրան է պատկանում նաև բարեփոխումների վերաբերյալ լայն քննարկումները վերահսկելու իշխանությունը, օրինակ՝ հայտարարելով բարեփոխումների որոշակի ուղղության գոյության և հաջողության մասին: Պետությունը կարողացել է գրեթե անսահմանափակ լիազորություններ իրականացնել բարձրագույն կրթության ոլորտում բարեփոխումների վերաբերյալ լայն հանրային քննարկումների բնույթն ու բովանդակությունը սահմանելու հարցում: Օրինակ, Հայաստանում շատ շահագրգիռ կողմեր (անհատներ և կազմակերպություններ) մասնավոր զրույցներում այն կարծիքն են արտահայտում, որ որակի ապահովման բնագավառում բարեփոխումների ուղղությունը սխալ է: Ավելին, նրանք գտնում են նաև, որ որակի ապահովման նոր համակարգի ներդրմամբ որևէ էական տեղաշարժ չի արձանագրվել: Սակայն գրեթե ոչ ոք այս մասին բարձրաձայն չի խոսում:

Երբ առաջարկում ենք, որ Հիմնադրամը հիմնական ուշադրությունն ուղի փարեփոխումների ճշմարիտ և իրական ուղղության աջակցմանը և խթանմանը, մենք նկատի ունենք հետևյալը՝

- Հիմնադրամը կարող է մոբիլիզացել կամ օգնել մոբիլիզացնելու օժանդակությունն ու աջակցությունը այն անհատների և կազմակերպությունների համար, որոնք պատրաստակամ են աշխատանքներ իրականացնել ի նպաստ փարեփոխումների:
- Հիմնադրամը՝ այլոց և պետության հետ համագործակցությամբ, պետք է զբաղվի քարոզչության իրականացմամբ՝ ուղղված բարձրագույն կրթության ոլորտի փարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ու բաց հանրային բանավեճերի խրախուսմանը:

Մենք հասկանում ենք, որ ռեֆորմների ուղղությունը մտահոգության առարկա պետք է լինի Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում բոլոր շահագրգիռ կողմերի, այդ թվում քաղաքական ռեժիմի համար:

## ***III.2. ԲՈՒՀ-երի մակարդակով***

### **III.2.a. Գիտահետազոտական ուսումնասիրություններ**

Թե՛ բարձրագույն ուսումնական հաստատությունների, և թե՛ առանձին գիտաշխատողների մակարդակով գիտահետազոտական աշխատանքների և գիտական ուսումնասիրությունների իրականացումը շատ թույլ հիմքերի վրա է դրված և փաստացիորեն անտեսված և թերագնահատված է: Հարցվածների կողմից բուհական կրթությունը նշվում էր որպես գոյություն ունեցող գիտելիքներն ու գիտությունը վերաբրտադրող համակարգ, ընդգծելով՝ որ բարձրագույն ուսումնական հաստատություններում նոր գիտելիքների ստեղծումը գրեթե ոչ մի կարևորություն չունի կամ շատ աննշան նշանակություն ունի: Հարցազրույցներից մեկի ժամանակ տեսակետ հնչեց, որ «Հայաստանում չկան գիտահետազոտական գործունեություն իրականացնող բուհեր, այլ միայն՝ կրթական հաստատություններ»: Պահպանելով խորհրդային ավանդույթները, այժմ էլ համարվում է՝ որ գիտահետազոտական աշխատանքները և գիտական ուսումնասիրությունները չպետք է իրականացվեն բարձրագույն ուսումնական հաստատություններում, այլ բացառապես Գիտությունների Ակադեմիայի ինստիտուտներում:

Թվում է, թե այսօր գրեթե չկան մեխանիզմներ կամ գործիքներ, որոնք հնարավորություն կտային բարձրագույն ուսումնական հաստատություններում

խրախուսել և խթանել գիտական գործունեությունը: Հատկապես Երևանում դասախոսները որպես հիմնական բացատրություն նշում էին ժամանակի և ռեսուրսների պակասը, ինչը թույլ չի տալիս գիտահետազոտական գործունեություն իրականացնել՝ թեկուզ կամավոր հիմունքներով: Նույնիսկ եթե նրանք հետաքրքրված լինեին նման գործունեություն իրականացնելու հարցում, միևնույնն է՝ դա ոչ ոքի պետք չէ, քանի որ որևէ մեկը դա չի պահանջում իրենցից, իսկ նրանք շատ դեպքերում՝ քիչ թե շատ բավարար վաստակելու համար, աշխատում են մեկից ավելի բարձրագույն ուսումնական հաստատությունում, ինչի արդյունքում այլևս ժամանակ չի մնում գիտահետազոտական ուսումնասիրությունների համար: Պրոֆեսորադասախոսական կազմի որոշ անդամներ նշում էին, որ գիտական գործունեություն իրականացնելու համար շատ լավ հնարավորություն է միջազգային գիտահետազոտական նախագծերում մասնակցելը կամ համատեղ աստիճանաշնորհման կրթական ծրագրերով միջազգային համագործակցությունը, ինչը երբեմն օգնում է գիտահետազոտական ոլորտում գործընկերային կապեր ձևավորել: Նրանք նշում էին նաև ազատ ժամանակ գիտական գործունեությամբ զբաղվելու մասին, որն ավելի շատ ֆակուլտատիվ բնույթի, այլ ոչ թե հիմնական աշխատանք է: Մյուսներն էլ, օրինակ՝ ճարտարագիտության ոլորտում, կանխամտածված կերպով նախընտրում են հիմնական ուշադրությունը սևեռել իրենց առարկայի տեսական կողմերի վրա, քանի որ դրանց դեպքում ավելի քիչ ֆինանսական ռեսուրսներ են պահանջվում գիտական ուսումնասիրություններ իրականացնելու համար:

**Հայաստանում բարձրագույն կրթության ոլորտի կրթական մոդելի խոշոր թերություններից է բարձրագույն ուսումնական հաստատություններում գիտահետազոտական գործունեության բացակայությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ գիտական ուսումնասիրության աշխատատանքներն ու դասավանդումը գրեթե ամբողջովին տարանջատված են միմյանցից:** Այս թերության առկայությունը ընդունել են ոչ միայն առանձին գիտնականներ, այլ նաև բարձրաստիճան ներկայացուցիչներ կրթության նախարարությունից, ինչը կարող է օգնել շտկելու իրավիճակը հետագայում:

Հիմք ընդունելով միջազգային պրակտիկան, կցանկանայինք որպես ամփոփում ներկայացնել մի քանի փաստարկներ հոգուտ այն գաղափարի, որ Հայաստանի բարձրագույն կրթության հաստատություններում վերակազմվի ու արմատավորվի գիտահետազոտական աշխատանքների ավանդույթը.

- Այն երկրները, որոնց բարձրագույն ուսումնական հաստատություններում գիտահետազոտական բազա գոյություն չունի կամ թերի է զարգացած, ավելի քիչ մրցունակ են համաշխարհային ասպարեզում: Մեր ժամանակներում մրցակցությունն իրականանում է գիտելիքահենք

տնտեսության և հասարակության կանոնների ազդեցությամբ, եթե ոչ՝ ուղղակի թելադրմամբ: Բարձրագույն ուսումնական հաստատությունները վճռորոշ և կարևորագույն նշանակություն ունեն գիտելիքահենք տնտեսության և հասարակության համար: Նրանք առանցքային դերակատարություն ունեն ոչ միայն գիտելիքի փոխանցման և տարածման, այլ նաև **գիտելիքի ստեղծման և գիտելիքների օգտագործման հարցում**: Հայաստանի բարձրագույն կրթության հաստատությունների կողմից իրականացվում է բացառապես գիտելիքների փոխանցում: **Եթե Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում գիտական և հետազոտական ուսումնասիրությունների միջոցով գիտելիքի ստեղծման գործունեություն չիրականացվի, Հայաստանը չի կարողանա ձևավորել պատշաճ և համապատասխան գիտելիքահենք տնտեսություն և հասարակություն: Այն կշարունակի մնալ ոչ մրցունակ, կախում ունենալ այլ երկրներից ներմուծվող գիտելիքից ու գիտական բազայի վրա հիմնված արդյունքներից, և կպահպանի այլ երկրներից ավելի քիչ զարգացած լինելու կարգավիճակը:**

- Գիտահետազոտական գործունեությունն անհրաժեշտ պայման է տաղանդավոր դասախոսներին և ընդհանուր առմամբ՝ տաղանդավոր մասնագետներին ներգրավելու և պահելու համար: Հակառակ դեպքում նրանք թողնում են ոլորտը կամ ընդհանրապես մեկնում երկրից:
- Գիտական ուսումնասիրություններ իրականացնելը և դասավանդելը միմյանցից լրիվ տարանջատելը միանգամայն հակառակ և անարդյունավետ ազդեցություն է ունենում: Օրինակ, եթե ուսանողների կամ դասախոսների համար գիտական ուսումնասիրություններ անելու և հետազոտելու անհրաժեշտություն չի ստեղծվում, ապա կոնկրետ գիտության նորագույն զարգացումների մասին նրանք ուշացած են իմանում, եթե իհակե ընդհանրապես իմանում են: Ուսանողների համար գիտական ուսումնասիրություններ և հետազոտություններ անցկացնելու անհրաժեշտություն չստեղծելը կամ նրանց դրանում չխրախուսելը լուրջ պրոբլեմների կհանգեցնի հետազոտողների հաջորդ սերունդների պատրաստման հարցում:
- Առարկան գերազանց տիրապետելու ձգտմամբ խթանվող գիտական ուսումնասիրությունների պրակտիկայի ներմուծումը և իրականացումը դասավանդման հետ միասին նպաստում է կրիտիկական մտածողության ձևավորմանը: Եվ հակառակը, գիտահետազոտական աշխատանքների և ուսումնասիրությունների լրիվ բացակայությունը բերում է ռեպրոդուկտիվ և ամեն ինչ կուրորեն ընդունելու պրակտիկան խրախուսող կրթական միջավայրի ստեղծմանն ու արմատավորմանը:

- Բարձրագույն ուսումնական հաստատություններում գիտական աշխատանքների և ուսումնասիրությունների բացակայությունը երկրին ընդհանրապես, իսկ առանձին տեղական համայնքներին՝ մասնավորապես, զրկում է առկա պրոբլեմները վերհանելու և վերլուծելու, ինչպես նաև դրանց համար սեփական ուժերով լուծումներ գտնելու՝ չափազանց կարևոր և պահանջված կարողություններ ձևավորելու հնարավորությունից: Սա կարևոր է ինչպես տնտեսության, այնպես էլ պետական կառավարման կամ այլ ոլորտների համար:

*Բարձրագույն ուսումնական հաստատություններում գիտական աշխատանքների և ուսումնասիրությունների կազմակերպումն անհրաժեշտ, սակայն միննույն ժամանակ ոչ բավարար պայման է Հայաստանում պատշաճ կերպով գործող և որակյալ բարձրագույն կրթության համակարգի համար:*

### **III.2.b. Դասավանդման մոտեցումներ և մեթոդաբանություն**

Հարցազրույցների արդյունքում *դասավանդողների երկու խումբ է առանձնացվել՝ ըստ դասավանդման մոտեցումների և դասավանդման մեթոդաբանության:* Առաջին խմբում ավելի ավանդական պրոֆեսորներն են, որոնք շատ քիչ են հետաքրքրված բարձրագույն կրթության ոլորտում հնարավոր փոփոխություններով և գերադասում են հիմնվել դասավանդման այն մեթոդների վրա, որոնք շարունակաբար՝ երբեմն տասնամյակներ շարունակ օգտագործվել են նրանց կողմից: Այս խմբի ներկայացուցիչների դասավանդման ոճը հաճախ անվանում են «դասավանդման խորհրդային ոճ», որի կիրառության առանձնահատկություններն են դասախոսություններ թելադրելը, լսարանում ոչ մի տեխնիկական միջոց չօգտագործելը, հին աղբյուրների/գրականության վրա հիմնվելը առանց միջազգային գրականությունից առավել ժամանակակից թեմաներ ներառելու (անգլերենի իմացությունը նույնպես խնդրահարույց հարց է): Չնայած տարիքը որոշիչ գործոն չէ դասավանդման մեթոդիկայի ու ոճի համար, այնուամենայնիվ հարկ է նշել, որ այս խմբի ներկայացուցիչները բավականին մեծահասակ են: Դասավանդող որոշ պրոֆեսորների միջին տարիքը նշվել է վաթսուն տարեկանը, մինչդեռ որոշ ուսանողների կողմից նշվել են դասախոսներ, որոնք դեռ դաս են տալիս լինելով ութսուն տարեկան:

Պրոֆեսորների երկրորդ խումբում ընդգրկվածները (որոնք թվով ավելի քիչ են) ավելի երիտասարդ սերնդի ներկայացուցիչներ են և՛ ի տարբերություն նախորդ խմբի, դասավանդման ավելի քիչ փորձ ունեն, սակայն շատ դեպքերում արդեն ունեն միջազգային աշխատանքի փորձ և ակտիվորեն հետևում են իրենց ակադեմիական ոլորտում տեղի ունեցող համաշխարհային զարգացումներին

ու նորարարություններին (բացի դրանից, անգլերենի իմացությունն ավելի լավ հիմքերի վրա է դրված): Նրանք ավելի նորարար մոտեցումներ են որդեգրում դասավանդման և ուսանողների առաջադիմության գնահատման իրենց մեթոդիկայում, փորձելով օգտվել լսարանում և ընդհանրապես սովորելու ընթացքում տեխնիկական միջոցներ և սարքեր օգտագործելու հնարավորությունից, և ավելի շատ են ձգտում փորձարկել դասավանդման նորանոր մեթոդներ:

Նմանապես, ուսանողներին էլ կարելի է դասակարգել երկու խմբի, և այդ դասակարգումը միանգամայն ընդունելի և հասկանալի է դասախոսների համար, որոնց մոտ՝ ուսանողների հետ անմիջական շփման արդյունքում բավականին քննադատող կարծիք է ձևավորվել: Շատ թվով ուսանողներ որակվել են որպես սովորելու որևէ ձգտում չունեցող, ավելի շատ դիպլոմի համար ԲՈՒՀ հաճախող՝ քան գիտելիք փնտրող և սովորելու հանդեպ որևէ հետաքրքրվածություն և մոտիվացիա չունեցող անձինք: Այս ուսանողները փորձում են ամեն կերպ խուսափել նորարարական մեթոդներով դասավանդվող դասընթացներից, քանի որ համարվում է, որ դրանց ժամանակ «ավելի շատ աշխատանք» է պահանջվում: Մյուս կողմից, կան նաև ուսանողներ, որոնք ձգտում ունեն իրենց ուսանողական փորձը որքան հնարավոր է արժեքավոր դարձնել, և որոնք իսկապես մեծ հետաքրքրվածություն ունեն սովորելու հանդեպ: Իրենց սեփական նախաձեռնությամբ նրանք փնտրում և գտնում են ուսանողների փոխանակման միջազգային կրթական ծրագրերի կամ արտասահմանում սովորելու հնարավորություններ, նրանք միշտ պատրաստակամությամբ են մասնակցում ֆակուլտատիվ պարապմունքներին՝ նյութն ավելի լավ յուրացնելու նպատակով, որոնցից կարող են լինել, օրինակ՝ իրավագիտության առարկայի դեպքում ուսումնական դատաքննության կազմակերպումը: Այս ուսանողները բավականին լուրջ գործնական և նախաձեռնողական հմտություններ ունեն իրենց կողմից ուսումնասիրվող ոլորտի վերաբերյալ առցանց, այդ թվում՝ համաշխարհային ռեսուրսներից լրացուցիչ տեղեկություններ և նյութեր գտնելու համար:

Թե՛ դասավանդողների, և թե՛ ուսանողների շրջանում նման բևեռացմամբ օպտիմալ կրթական միջավայր չի կարող ստեղծվել: Իրականում այն լարվածություն և պրոբլեմներ է առաջացնում համակարգում: Օրինակ՝ ինչպես նշվել է հարցվածներից շատերի, այդ թվում՝ ուսանողների կողմից, շատ դեպքերում դասավանդման և ուսանողների գնահատման հարցում նորարար մոտեցումների ու մեթոդների որդեգրման կողմնակից դասախոսները ճնշումների և քննադատության են ենթարկվում իրենց ղեկավարության և

ավանդական խմբի ներկայացուցիչներ հանդիսացող իրենց գործընկերների կողմից, ու շատ հաճախ նաև ընդվզումների՝ հենց ուսանողների կողմից:

**Էլեկտրոնային ռեսուրսների կամ առցանց կրթական հնարավորությունների օգտագործումը** Հայաստանում դասավանդման և սովորելու նպատակներով ծայրահեղ սահմանափակ բնույթ է կրում: Անհրաժեշտ ենթակառուցվածքները չափազանց թերզարգացած են կամ ընդհանրապես չկան: Բարձրագույն ուսումնական հաստատություններից շատերում ուսանողներին նույնիսկ էլեկտրոնային փոստի հասցե չի տրամադրվում իրենց ԲՈՒՀ-երի կողմից (նույնիսկ թիվ մեկ ԲՈՒՀ-ը՝ Երևանի պետական համալսարանը, դեռ միայն նոր է սկսել իր ուսանողներին համալսարանական փոստի հասցեներ տրամադրել): Որոշ բարձրագույն ուսումնական հաստատություններ նույնիսկ հուսալի ինտերնետ կապ չունեն: Դասավանդման նպատակով ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործման վերաբերյալ շատ քիչ իրազեկվածություն կա: Երբեմն ուսանողներն այդ մասին ավելի շատ բան են իմանում, քան իրենց դասախոսները, քանի որ օգտվում են այլ երկրների ինստիտուտների կողմից առաջարկվող առցանց ծրագրերից:

Հարկ ենք համարում նշել ուշադրության արժանի մի բացառության և շատ հուսադրող ու խրախուսիչ օրինակի մասին: ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) կրթական և հետազոտական կենտրոնը՝ օտարերկրյա գործընկերների հետ համագործակցությամբ, առաջարկում է բազմաթիվ առցանց դասընթացներ, զուգակցված կրթական եղանակով ուսուցում, գիտահետազոտական ուսումնասիրություններ (հետբուհական կրթական ծրագրերում), ինչպես նաև հեղինակավոր միջազգային պարբերականներում հրապարակվելու հնարավորություն: Այս նախաձեռնությունները մեկնարկել են Հիմնադրամի աջակցությամբ և բավականին արդյունավետ են եղել ու լավ արձագանք են ստացել նույնիսկ միջազգային ասպարեզում:

Չնայած մեր ջանքերին և չնայած այն հանգամանքին, որ Հիմնադրամի կողմից հատուկ ծրագիր էր իրականացվում գրադարաններին օժանդակելու ուղղությամբ, մենք չկարողացանք գնահատել բարձրագույն ուսումնական հաստատություններում էլեկտրոնային գրադարանային ռեսուրսների առկայության հետ կապված իրավիճակը: Այնուամենայնիվ, ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի անդամների հետ հարցազրույցներից ստացված տվյալներից (որոնք մենք չկարողացանք լրացուցիչ ստուգել և հաստատել) պարզ դարձավ, որ ամեն դեպքում նման ռեսուրսները շատ քիչ են: **Բարձրագույն կրթության համակարգն ավելի բաց և հասանելի դարձնելուն, ինչպես նաև դասավանդման և սովորելու մեթոդների բարելավմանն ու բարձրագույն ուսումնական հաստատություններում գիտահետազոտական**

*գործունեության ներդրմանն ուղղված ջանքերը հնարավոր և արդյունավետ չեն լինի առանց պատշաճ գրադարանային համակարգի զարգացման, որի միջոցով՝ ի թիվս այլոց, պետք է ապահովվի էլեկտրոնային ռեսուրսներից օգտվելու հնարավորությունը, ինչպես նաև օժանդակվի և խրախուսվի ուսուցման առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործումը:*

**III.2.c. Բարձրագույն ուսումնական հաստատությունների վարչական անձնակազմը, ղեկավարությունը և կառավարումը**

Ինչպես և ցանկացած այլ երկրում, բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումների հաջողությունը, ի թիվս այլ գործոնների, կախված է բարձրագույն ուսումնական հաստատությունների վարչական տնտեսավարման, կառավարման և ղեկավարման որակից և աշխատանքից: Մենք կարողացել ենք բացահայտել մի քանի առանցքային խնդիրներ այս բնագավառում.

- Բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարման թափանցիկության պակասը նշանակալի պրոբլեմ է, հատկապես երբ դա վերաբերում է կադրերին աշխատանքի վերցնելու և աշխատանքից ազատելու, ինչպես նաև ֆինանսների հետ կապված հարցերին: Բավականին լուրջ խնդիր է մարդկային ռեսուրսների կառավարումը ներկայումս գործող պրակտիկան և քաղաքականությունները պրոֆեսիոնալ առումով թերի են: Օրինակ, կադրերի կառավարման, այդ թվում նաև պայմանագրային հարցերը, կարգավորվում են բավականին հայեցողական մոտեցմամբ, ինչպես քննարկվում է ստորև՝ պրոֆեսորա-դասախոսական կազմի անդամների վերաբերյալ բաժնում (բաժին III.3): Որպես մեկ այլ օրինակ կարող է նշվել այն փաստը, որ որևէ հրապարակային տեղեկատվություն չի տրամադրվում այն մասին, թե ուր են գնում ԲՈՒՀ-երի գումարները և որքան են դրանք կազմում:
- Ֆինանսական կառավարման հարցում մասնագիտական կարողությունները շատ սահմանափակ են: Ֆինանսական կառավարման համար պատասխանատու անձինք չունեն **կառավարման** գծով պատշաճ վերապատրաստում կամ փորձ, բացի հաշվապահական հաշվառման հոսակ և խիստ կանոններին հետևելու պրակտիկայից: Մինևույն ժամանակ, անարդյունավետ է նաև ֆինանսական կառավարման համար նախատեսված ինստիտուցիոնալ մեխանիզմը և բավականին հակասական հիմքերի վրա է դրված: Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բյուջեի միայն 9-ից 30 տոկոսն է ֆինանսավորվում պետական միջոցներից, մինչդեռ ֆինանսական միջոցների՝ նույնիսկ մասնավոր հիմունքներով գոյացած միջոցների,



օգտագործման նկատմամբ վերահսկողությունն ամբողջությամբ իրականացվում է պետության կողմից: Այս մեխանիզմի փոփոխությանն ուղղված՝ Համաշխարհային բանկի օժանդակությամբ պետական մակարդակով քննարկումներն ու ծրագրերը դեռ չեն իրագործվել: Այդ ծրագրերը կառավարությունում դեռ բանավեճերի ու քննարկումների առարկա են, իսկ կրթության նախարարության պաշտոնյաների հետ հանդիպումների ժամանակ ֆինանսավորման նոր մեխանիզմի ստեղծման հարցի առնչությամբ նշվեց, որ այն ընթացիկ հարցերի օրակարգում է: Կարող է օգնել այս հարցում բոլոնյան գործընթացը: Իրականում բոլոնյան բարեփոխումների շրջանակներում որևէ տեղ ինստիտուցիոնալ մակարդակով ֆինանսական կառավարման հարցը որևէ հիմնական կամ կանոնավոր քննարկման առարկա չի եղել, չնայած որ դա խրոխուսվում էր Եվրոպական հանձնաժողովի և Եվրոպական համասարանների ասոցիացիայի (ԵՀԱ) կողմից:<sup>15</sup> *Հայաստանի կողմից բոլոնյան գործընթացը գլխավորելու ժամկետը՝ 2012-ից մինչև 2015 թվականը բոլոնյան քարտուղարությունը հյուրընկալելու միջոցով, կարող է դիտվել որպես շատ լավ հնարավորություն: Այս ժամանակահատվածի համար Հայաստանի կողմից որպես ամբողջ բոլոնյան գործընթացի հիմնական թեմատիկ ուղղություններ ընտրվել են կառավարումը և ֆինանսավորումը, ինչը միանգամայն հաջողված ընտրություն է ոչ միայն հենց երկրի, այլ նաև ամբողջ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի համար: Սա կարող է լավ հնարավորություն լինել, որ ավելի շատ շեփոխվի Հայաստանում կրթական հաստատությունների ֆինանսական կառավարման կարևորությունը, չսահմանափակվելով միայն ներկայումս տեղի ունեցող անարդյունավետ և միայն ֆինանսավորման մասով համակարգին առնչվող քննարկումներով:*

- Բացի համակարգային մակարդակում քաղաքական հիմքեր ունեցող խոչընդոտներից, բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումների ընթացքը շատ հաճախ արգելքների է հանդիպում նաև բարձր և միջին կառավարման օղակներում: Այս իրավիճակի համար կարող են բազմաթիվ հնարավոր բացատրություններ լինել: Դրանցից մեկը կապված է այն փաստի հետ, որ ղեկավար պաշտոններում շատ քիչ են ավելի նորարար, երիտասարդ ակադեմիական կադրերը, քանի որ նրանք

<sup>15</sup> Տե՛ս, օրինակ, ԵՀԱ ծրագրերը և հաշվետվությունները. «Եվրոպական համալսարանների եկամուտների հոսքերի բազմազանեցում» (2008-2011թթ.), կամ «Ֆինանսապես կայուն համալսարաններ. Եվրոպայի համալսարաններում անցում դեպի ամբողջական հաշվառման համակարգի» (2006-2008թթ.), ինչպես նաև ԵՄ Բարձրագույն կրթության արդիականացման օրակարգը ([http://ec.europa.eu/education/higher-education/agenda\\_en.htm](http://ec.europa.eu/education/higher-education/agenda_en.htm))

կա՛մ մեկնել են երկրից, կա՛մ նրանց առաջխաղացման հնարավորություն չի տրվում: Շատ հազվադեպ դեպքերում էինք մենք կարողանում բարձր պաշտոններում՝ օրինակ, պրոռեկտորի պաշտոնում, հանդիպել ավելի երիիտասարդ ակադեմիական կադրերի (չնայած որ այդպիսիք կան մի քանի տեղերում և ակնհայտորեն տարբերվող գործունեություն են իրականացնում, նույնիսկ եթե ակնհայտ «հեղափոխական» դիրքորոշում չեն որդեգրում): Շատ դեպքերում թվում է, որ բարձրագույն ուսումնական հաստատություններում ավելի շատ իշխանություն ունեն առավել տարիքով «հին սերնդի» պրոֆեսորները: Նրանք այդքան էլ շահագրգռված չեն փոփոխությունների հարցում, քանի որ իրենց շատ հարմարավետ են զգում ներկա պաշտոններում և գոհ են իրենց ունեցած դերից ու նշանակությունից, չնայած որ այս կատեգորիայի անձանց շրջանում նույնպես կան որոշ բացառություններ:

- Այլ երկրներում բարձրագույն ուսումնական հաստատությունները պրոֆեսորներին խրախուսում են միջազգային փորձ ձեռք բերելու և ընդհանրապես գլոբալ փոփոխությունների համար առավել բաց լինելու հարցում, մինչդեռ Հայաստանում՝ եթե նման բան տեղի է ունենում, ապա լինում է, թերևս, առանձին պրոֆեսորների սեփական նախաձեռնությամբ, որոնք երբեմն ստիպված են լինում խոչընդոտների հանդիպել: Միջազգային գործընկերությունների և համագործակցության, ինչպես նաև փոխանակման ծրագրերի մասին տեղեկությունները դուրսին կերպով հասանելի ու մատչելի չեն դասախոսների համար: Որևէ խրախուսանքի կամ գնահատանքի չեն արժանանում նրանք, ովքեր հաղթում են միջազգային հեղինակավոր կրթաթոշակային ծրագրերում: Կադրերի միջազգային շարժունակությունը դիտվում է որպես վարչական պրոցես («լրացրու ձևաթղթերը, զեկույց ներկայացրու վերադառնալուց հետո» և այլ նմանատիպ մոտեցում ընդամենը):

### ***III.3. Պրոֆեսորադասախոսական կազմի անդամներ (գիտաշխատողներ)***

Վերջին տարիներին թերևս ընկել է դասախոսի ընդհանուր հեղինակությունը, ու դրա մեկտեղ նաև՝ այդ մասնագիտության վարկանիշը: Այս հանգամանքը տարհամոզիչ և խոչընդոտող դեր է ունենում բարձրագույն ուսումնական հաստատությունում դասախոս լինելու ցանկության համար: Բացի դրանից, ոչ պակաս հետ պահող գործոն է նաև մասնագիտության իրավական կարգավիճակը: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամներն աշխատանքի են ընդունվում կարճաժամկետ՝ մեկից հինգ տարի

Ժամկետով պայմանագրերի հիման վրա<sup>16</sup>, վարչական գծով ղեկավարներին մտահոգություն առաջացնող աստիճանի վերահսկողական լիազորություններ ընձեռելով այն հարցերում, թե ով և ինչպես պետք է աշխատանքի ընդունվի: Բացի դրանից, Հայաստանի դասախոսներն աշխարհի մասշտաբով ամենացածր աշխատավարձերից են ստանում<sup>17</sup>, իսկ երկրի տարբեր մարզերում աշխատավարձերի չափերի միջև զգալի անհամապատասխանություններ կան: Ավելին, գրեթե չեն գնահատվում պրոֆեսորադասախոսական կազմի այն անդամները, որոնք ավելի ակտիվ են ու ավելի շատ հաջողությունների են հասնում թե՛ տեղական, թե՛ միջազգային ասպարեզում, գիտահետազոտական նախագծերում կամ այլ նախաձեռնություններում:

Այս իրավիճակը արատավոր միջավայր է ստեղծում և բոլորովին չի խրախուսում դասախոսներին ներգրավվել այդ ոլորտի բարեփոխումներում:

Քանի որ աշխատավարձերը չափազանց ցածր են, դասախոսները ստիպված են լինում աշխատանքի անցնել մի քանի բարձրագույն ուսումնական հաստատություններում, որ լրացնեն այն բացը, որն առաջանում է միայն մեկ տեղում աշխատելու և միայն այնտեղից աշխատավարձ ստանալու արդյունքում: Հետևաբար, հասկանալի պատճառներով այս իրավիճակը բացասաբար է անդրադառնում դասավանդման կատարողականի, գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվելու պատրաստականության կամ հանրային ծառայության վրա ընդհանրապես: Հարցված դասախոսներից մեկն ասել էր հետևյալը. «Ես դասավանդում եմ ութ առարկա իմ ԲՈՒՀ-ում, և իմ ամսական աշխատավարձը բավականացնում է միայն երեք օր գոյատևելու համար ... ի՞նչ գիտահետազոտական աշխատանքի մասին է խոսքը»: Երբեմն պրոֆեսորադասախոսական կազմի անդամները նույնիսկ դասավանդում են առանց վարձատրության, ինչը դասախոսների կողմից նշվում է որպես «կամավոր հիմունքներով դասավանդում»: Լինում են դեպքեր, երբ դասավանդողներն այլ տեղերում վաստակած իրենց սեփական միջոցներն են ներդնում իրենց կրթական հաստատություններում ուսումնական նյութերի ձեռքբերման համար: Այլոք ուսանողներից կաշառք են վերցնում քննություններն ընդունելու, նրանց լավ գնահատականներ նշանակելու համար, կամ «վճարներ» են վերցնում ուսանողների փոխարեն նրանց աշխատանքները գրելու համար: Ինչպես նշվել է «III.2.a» բաժնում, դասախոսները պետք է իրենք նախաձեռնություն ցուցաբերեն գիտահետազոտական ուսումնասիրությունների և աշխատանքների բնագավառում իրենց հետաքրքրությունների բավարարման

<sup>16</sup> Եվրոպական հանձնաժողով, 2012թ., «Բարձրագույն կրթությունը Հայաստանում», Բրյուսել, Կրթական, աուդիովիզուալ և մշակութային գործադիր գործակալություն (EACEA)

<sup>17</sup> Պ. Ալտբախ, 2012թ. «Պրոֆեսորադասախոսական կազմի վարձատրությունը: Վճարումների և պայմանագրերի գլոբալ համեմատություն», Լոնդոն, Ռուլթեջ

և գիտական աշխատանքի հնարավորությունների որոնման համար, իսկ մեծամասամբ նրանք չափազանց զբաղված և հոգնած են լինում դասախոսական մի քանի հաստիքներում աշխատելու պատճառով:

Ակադեմիական անձնակազմի կողմից դրական արդյունքները և նվաճումները, այն է՝ պատշաճ դասավանդումը, որակի պահպանումը, գիտական ուսումնասիրությունների արդյունքում նոր գիտելիքների ստեղծումը, թերևս տեղի են ունենում *ի հեճուկս*, այլ *ոչ թե շնորհիվ* Բարձրագույն ուսումնական հաստատությունների և այնտեղ ստեղծված պայմանների: Հարկ է նշել այն հանգամանքը, որ ենթակառուցվածքը անբավարար է թե՛ դասավանդման, և թե՛ գիտահետազոտական գործունեության համար: Ինչպես նշել էր դասախոսներից մեկը՝ «Ես միայն մի սեղան ունեմ համալսարանում, և մարդիկ կան, որ նույնիսկ այդ սեղանն էլ չունեն»: Պրոֆեսորադասախոսական կազմի անդամների մոտ մշտապես առկա է անպաշտպան լինելու զգացումը՝ կապված աշխատանքի ընդունման կարճաժամկետ պայմանագրերի հետ, որոնք թարմացվում են ղեկավարության հայեցողությամբ: Հայաստանում չկան մասնագիտական ասոցիացիաներ, որոնք աջակցություն կցուցաբերեն դասախոսներին, ինչպես նաև չկան արհեստակցական միություններ:

*Այս հանգամանքները համահավաք կերպով լուրջ խնդիրներ են առաջացնում ակադեմիական անձեռնմխելիության, ակադեմիական ազատությունների և ակադեմիական գործունեության համար:*

### **III.4. Ուսանողներ**

Ուսանողների հետ կապված մենք վերհանել ենք բազմաթիվ հարցեր, որոնք հարկ ենք համարում ներկայացնել Հայաստանում բարձրագույն կրթության համակարգի վերաբերյալ այս մանրամասն ուսումնասիրությունում.

- Ինչպես նշվել է վերևում, կրթական մոդելի վերաբերյալ բաժնում (III.1.i.), գրեթե ոչինչ չի արվում ուսանողներին գործնական հմտություններ և կարողություններ տալու համար: Որպես կանոն, Հայաստանում բարձրագույն կրթությունը շարունակում է մնալ որպես բացառապես տեսական, վերացական գիտելիքներ տվող ուսուցում (որոշ բաժիններ ու ֆակուլտետներում շեղում է արվում այս մոդելից):
- Ուսանողները, ինչպես նաև դասախոսները և ղեկավարության ներկայացուցիչները, գտնում են, որ զգալի տարանջատվածություն կա բարձրագույն կրթության և աշխատաշուկայի իրականության միջև:
- Շատ ուսանողներ այսօր այլ վերաբերմունք ունեն սովորելու նկատմամբ, քան իրենց դասախոսները: Նրանք երբեմն ավելի լավ լեզվական

հմտություններ և տեխնոլոգիաներից օգտվելու կարողություններ են ունենում: Մա կարող է լարվածություններ առաջացնել ուսանողների և դասախոսների միջև, ինչը վերջնական արդյունքում կարող է և դրական դեր ունենալ: Այլընտրանքային կրթական առաջարկները, որոնք թեև շատ սահմանափակ են այսօր, կարող են նոր հնարավորություններ ստեղծել ուսանողների համար թե՛ մասնագիտական որակի բարձրացման, և թե՛ ազատության և ինքնուրույնության խթանման համար:

- Դասախոսները և վարչական անձնակազմի անդամները հաճախ իրենց կերպարով օրինակ են ծառայում ուսանողների համար: Հաշվի առնելով բարձրագույն կրթության համակարգի առանձնահատկություններն ընդհանուր առմամբ և՛ մասնավորապես, թե շատ դասախոսներ և բարձրագույն ուսումնական հաստատությունների վարչական անձնակազմի անդամներ ինչպես են իրենց դրսևորում առօրյա գործունեության ընթացքում (ներառյալ կոռուպցիան, ինքնագրաքննադատությունը և այլ հարցեր), կարելի է ասել, որ ուսանողներին առաջարկվող «օրինակը» լավագույն դեպքում հակասական է ու անորոշ, եթե պարզապես բացասական չէ:
- Ուսանողների ներգրավվածությունը հանրային և հասարակական գործունեության ոլորտներում ընդհանուր առմամբ շատ սահմանափակ է: Թերևս մայրաքաղաքից դուրս եղած ուսանողները (բուհական ավելի փոքր համայնքներում) շատ ավելի ակտիվ են ու մասնակցային:
- Ուսանողների մոտ չկա ճիշտ կազմակերպվածություն և դրա հեևանքով նրանց ձայնը իրականում մնում է անլսելի: Եթե նրանք համախմբվում են, ապա շատ դեպքերում քաղաքական կազմակերպությունների (կուսակցությունների) դրոշի ներքո՝ որդեգրելով և կիսելով այդ կազմակերպությունների գաղափարախոսությունը և ծրագրերը: Որոշակի առաջընթաց վերջերս արձանագրվել է ուսանողների մասնակցության կապակցությամբ: Վերջերս ամրապանդվել են ուսանողների ձայնի իրավունքները իրավական բարեփոխումների շնորհիվ, որոնցով ուսանողներին հնարավորություն է տրվում մասնակցել բարձրագույն ուսումնական հաստատության կառավարմանը: Ըստ օրենքի, ուսանողներն իրենց մասնակցությամբ զգալի տոկոս են կազմում բոլոր բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարման մարմինների կազմում: Բացի դրանից, Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիան (ՀՈԻԱԱ) դարձել է Եվրոպական ուսանողական միության անդամ: Սակայն այս նախաձեռնություններից շատերը մեծապես վերահսկվում են քաղաքական կառույցների կողմից՝ երբեմն ուղեկցվելով ուղղակի

քաղաքական միջամտություններով: Ուսանողական ներկայիս նախաձեռնություններից շատերը թերևս ուղղված են իրենց առաջնորդների համար քաղաքական կարիերա ապահովելուն, քան ակտիվ ներգրավվածություն ունեցող առաջնորդներին բարձրագույն ուսումնական հաստատություններ բերելուն: Օրինակ, ԲՈՒՀ-երի ղեկավարության մոտ դեռ արմատավորված մնում է այն տեսակետը, որ «ուսանողները պետք է լինեն լսարանում ոչ թե փողոցներում»: Բայց միևնույն ժամանակ լսեցինք նաև խոշոր մի համալսարանի պրոռեկտորի կարծիքը, ով բողոքում էր, թե ուսանողները չափից դուրս լուռ են ու երբեք մասնակցություն չեն ունենում համալսարանի խորհրդում, որտեղ նրանք կարող են և պետք է մասնակցեն հաշվի առնելով իրենց զգալիորեն մեծ թիվը:

### ***III.5. Փոփոխության ջատագովների՝ «Հայաստանի 100-յակը»***

Հայաստանում և Հայաստանի վերաբերյալ մեր ուսումնասիրության ամբողջ ընթացքում մենք փորձել ենք գտնել, թե ովքեր կարող են լինել փոփոխության փաստացի ու նաև պոտենցիալ իրական ջատագովներն ու կրողները, և «քանիսն են» նրանք գլխավորապես հենց բարձրագույն կրթության համակարգում: Այս համատեքստում «փոփոխության ջատագովներ» ասելով հասկանում ենք նրանց, ովքեր գիտակցում են փոփոխությունների անհրաժեշտությունը, կոմպետենտ են և պատրաստ են ակտիվ մասնակցություն ունենալ: Մասնավորապես, մենք հետաքրքրված էինք այն անձանցով, ովքեր հասկանում են, թե ինչպես կարող են տեղի ունենալ բոլոնյան բարեփոխումները, և որոնք նվիրված են այն գործին, որ այդ բարեփոխումներն ավելի խորքային ազդեցություն ունենան, այլ ոչ թե պարզապես «կոսմետիկ» փոփոխություններ բերեն: Հարցազրույցների ժամանակ հաստատվեց, որ նման մարդիկ կան Հայաստանի յուրաքանչյուր ԲՈՒՀ-ում, ՀԿ-ներում և պետական կառույցներում, չնայած որ այս պահին նրանք թվով դեռ շատ քիչ են:

Վստահաբար կարող ենք նշել, որ փոփոխության ջատագովներ իսկապես կան Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում: Նրանցից ոմանք արդեն հրապարակավ ստանձնել են այս դերը: Մյուսները ունեն որպես փոփոխության ջատագով և կրող լինելու պոտենցիալը, բայց վարանում են դա անել կամ պարզապես չգիտեն, թե ինչես դա անել: ***Գտնում ենք, որ Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտի ներկայիս բարեփոխումների ծրագիրը արդյունավետ և ճնարիտ նախաձեռնություն դարձնելուն ուղղած բոլոր ջանքերում անհրաժեշտ է ուշադրությունն ուղել փոփոխությունների թե՛ փաստացի, և թե պոտենցիալ ջատագովներին:***

Հիմնվելով մեր դիտարկումների և հարցազրույցների արդյունքների վրա, փոփոխության ջատագովների շարքերում ներառել ենք հետևյալ անձանց՝

- Բարեփոխումներին կողմնակից դասախոսներ, որոնք այլ մոտեցում ունեն դասավանդման նկատմամբ, որոնք կարողանում են նյութեր տպագրել միջազգային պարբերականներում, մշակում են նոր ծրագրեր և պլանավորում նոր աշխատանքներ՝ հիմնականում միջազգային ֆինանսավորմամբ: Այս խմբում կան մարդիկ, որոնք որոշակի չափով արդեն կորցրել են իրենց մոտիվացիան և էնտուզիազմը և այլևս չեն հավատում, որ փոփոխությունները կարող են իրականություն դառնալ: Ուստի որոշ դեպքերում կարող է անհրաժեշտ լինել «վերասկտիվացնել» նրանց:
- Բարձրագույն ուսումնական հաստատությունների ղեկավար կազմի անդամներ և բարձրագույն կրթության ոլորտի տեղացի փորձագետներ, ովքեր կանգնած են եղել բոլոնյան բարեփոխումների ակունքներում, ովքեր գիտակցում են այս բարեփոխումների իրական լինելը, սահմանափակումները և պոտենցիալը, և անկախ մտածելակերպ ունեն: Հարցազրույցների ժամանակ մենք հարց տվեցինք, ***թե Հայաստանում քանի անհատ կարող է լինել, ովքեր «իսկապես ծանոթ են» բարեփոխումներին և «իսկապես ջանքեր են գործադրում» ի նպաստ բարեփոխումների: Պատասխանները գրեթե նույնն էին լինում՝ նշելով, որ նման մարդիկ «մոտավերապես 100-ն են»:*** Մենք հնարավորություն չունենք ստուգելու այս ցուցանիշը, սակայն գիտակից և նվիրյալ անձանց 100-հոգանոց խումբը (կամ «ակումբը») արդեն իսկ հիմք է, որի վրա կարելի է հենվել: Այս մարդիկ ներկայումս աշխատում են հիմնականում որպես առանձին անհատներ կամ շատ փոքր մեկուսացված խմբերում, որոնք կարծես փոքր կղզիներ լինեն համակարգում, և ստիպված են լինում դիմակայել իրենց ռեկտորներից, դեկաններից, գործընկերներից և ընտանիքի անդամներից ու այլ անձանցից եկող բազմաթիվ ճնշումներին: ***Իրենց ջանքերում և մտածելակերպի մեջ միայնակ ու մեկուսացված լինելու այս անձանց զգացումը շատ ակնհայտորեն նկատելի էր հարցազրույցների ժամանակ:*** Երբեմն լինում է նաև ճիշտ հակառակը, և որոշ դեպքերում որպես փոփոխության ջատագովներ գործող անհատները վայելում են իրենց դեկանների, ռեկտորների կամ գործընկերների աջակցությունը: ***Ներկայումս գոյություն չունի որևէ ֆորմալ կամ կազմակերպված «100-յակի ակումբ», ոչ էլ որևէ ֆորում կամ մեխանիզմ՝ նրանց միավորելու, համատեղ աշխատելու կամ պարզապես փոխադարձ օժանդակություն տրամադրելու համար:*** Այս ուղղությամբ գոյություն ունեցող միակ

նախաձեռնությունը ֆեյսբուքյան փոքր խումբն է, որը ժամանակ առ ժամանակ ազդեցիկ դեր է ունենում որոշակի հարցեր բարձրացնելու կամ պատասխանատու անձանց ուշադրությունը հրավիրելու գործում:

- Գոյություն ունեն երիտասարդական և ուսանողական ակտիվիստական փոքր նախաձեռնություններ (օրինակ՝ բանավեճի ակումբներ, երիտասարդական ՀԿ-ներ, ուսանողական խորհուրդներ), որոնք թեն բարձրագույն կրթության ոլորտի ավելի քիչ իմացություն ունեն, բայց թերևս ավելի ակտիվ են ու ավելի շատ էներգիա ու կորով ունեն խնդրահարույց հարցերի, ինչպես օրինակ՝ կոռուպցիայի կամ ԲՈՒՀ-երի քաղաքականացման վերաբերյալ հարցերը վեր հանելու և դրանց մասին բարձրաձայնելու համար:
- Բոլոնյան բարեփոխումների իրականացման գրեթե ութ տարիներից հետո **համակարգում նշված 100-յակից ավելի շատ մարդիկ կան, որոնք տեխնիկապես կոմպետենտ են և կարող են լուրջ ներդրում ունենալ բարեփոխումների իրականացման հարցում:** Սակայն նրանք չունեն բեկումնային փոփոխություն մտցնելու գործին միանալու պարտավորվածություն կամ խրախուսիչ մոտիվացիա, չկա «բարեփոխումների պատշաճ դաշտ», չնայած նրանցից ոմանց մոտ հետաքրքրություն է առաջացել փորձել միանալ այդ գործին՝ առաջնորդվելով մասնագիտական, եթե ոչ՝ բարոյական կամ քաղաքական դրդապատճառերով: Մենք հանդիպել ենք նման մարդկանց: Նրանք աշխատում են բարձրագույն ուսումնական հաստատություններում, ու նաև պետական գերատեսչություններում և հենց կառավարությունում: Վստահ ենք, որ նրանք շատ կարևոր պահուստային ուժ են իրենցից ներկայանցում, որը պետք է մոբիլիզացվի, եթե պետք է՝ որ Հայաստանում բարձրագույն կրթության ոլորտի վերափոխումը հաջողությամբ ավարտվի: Չնայած հեշտ չի լինելու, բայց նման մոբիլիզացումը պետք է հնարավոր լինի ապահովել՝ թեկուզ մասնակիորեն: Իհարկե, միան այս ուժերը մոբիլիզացնելը չի լուծի Հայաստանում բարձրագույն կրթության ոլորտի պրոբլեմները, քանի որ անհրաժեշտ է հաշվի առնել նաև այլ գործոնները և դերակատարներին, սակայն դա կարող է հսկայական օգնություն ապահովել:

#### IV. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՄԱՐ

Կատարված ուսումնասիրության հիման վրա մենք առաջարկում ենք ԲՀՀ-ին դիտարկել **նոր ռազմավարական խնդիրների և նոր տակտիկական**



**մոտեցումների** որդեգրման հնարավորությունը բարձրագույն կրթության ոլորտում իրականացվելիք իր առաջիկա ծրագրերում: Մեր կողմից առաջարկվող նոր ռազմավարական խնդիրներն են՝ **աջակցել ոլորտում բարեփոխումների համար նպաստավոր դաշտի ձևավորմանը և դրա պահպանմանը** և **խրախուսել ռեֆորմների սկզբնական ուղղության պահպանումը: Բարեփոխումների դաշտի և ռեֆորմների ուղղության** սկզբունքների մասին ավելի մանրամասնորեն խոսվում է սույն հաշվետվության «III.1.յ» բաժնում:

Նոր տակտիկական մոտեցման առումով մենք առաջարկում ենք Հիմնադրամին **սեփական ուժերով առկա խնդիրները լուծելու փորձեր կատարելու փոխարեն մոբիլիզացնել ոլորտի այլ գործող անձանց և օգնել նրանց լուծելու այդ խնդիրները:**

Ավելի կոնկրետ առաջարկում ենք Հիմնադրամին, որ դիտարկի բարձրագույն կրթության ոլորտում իրականացվելիք իր առաջիկա ծրագրերում հետևյալն ընդգրկելու հնարավորությունը՝

1. **«Սոցիալական միջնորդություն».** Բարեփոխումներն ինքնուրույն **իրականացնելու** փորձ անելու փոխարեն ԲՀՀ-ն կարող է **աջակցել** դրանց իրականացմանը՝ բոլոր գիտակից, ներկայումս մեծապես մեկուսացած և երբեմն համարձակ դերակատարների, այն է՝ պահանջվող աշխատանքներն իրականացնելու հարցում պատրաստակամ անհատների և կազմակերպությունների համար անհրաժեշտ օգնությունն ապահովելու և մոբիլիզացնելու միջոցով: Սա կարող է նշանակել հետևյալը. ապահովել և մոբիլիզացնել օժանդակությունը բարեփոխումներին նպաստող նրանց ընթացիկ նախաձեռնությունների կամ նոր նախաձեռնությունների իրականացման գաղափարների համար, օգնել նրանց միավորվել և կազմակերպված ուժ դառնալ՝ միմյանց փոխադարձ օժանդակություն տրամադրելու հնարավորությունների ստեղծման համար, նպատակ ունենալով բարձրացնել նրանց առանձին գործողությունների կամ «անհատական ներդրումների» արդյունավետությունը (այդ իսկ պատճառով է օգտագործվել «սոցիալական միջնորդություն» փոխաբերությունը): **Մեր գնահատմամբ, ռազմավարորեն հիմնվելով առկա դրական տեղաշարժերի և նախաձեռնությունների վրա հնարավոր կլինի առաջընթաց ապահովել կրիտիկական զանգված ձևավորելու կամ բեկումնային կետի հասնելու ուղղության մեջ:** Հայաստանում բարեփոխումների իրականացման հաջողությունն ապահովելու համար զգալի ռեսուրսներ են անհրաժեշտ: ԲՀՀ-ն հավակնոտ առաքելություն, սակայն սահմանափակ ռեսուրսներ ունի: Այս ոլորտում հաջողության հասնելու համար ԲՀՀ-ի կողմից կարող

է որպէս առաջնահերթություն որդեգրվել վերը նշված անձանց և կազմակերպությունների համար միջազգային (մասնագիտական, ֆինանսական և քաղաքական) օգնության մոբիլիզացումը, քան պարզապէս սեփական ռեսուրսներից ուղղակի օժանդակության տրամադրումը:

**2. Քարոզչություն և հանրային երկխոսության նախաձեռնում.**

Հայաստանում լուրջ պրոբլէմ է բարձրագույն կրթության ոլորտում տիրող փաստացի իրավիճակի վերաբերյալ հանրության որոշակի լռությունը, տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ քննադատություն հնչեցնող կամ լավ գաղափարները և գործելակերպերը տարածելուն նպաստող հանրության ձայների սակավությունը: *«Տեղի ունեցող իրադարձությունների» վերաբերյալ հանրային քննարկումները պետք է վերաբերեն ոչ միայն պետության, այլ նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների քաղաքականությանն ու գործողություններին, ինչպէս նաև այլ դերակատարներին՝ մասնավորապէս միջազգային կազմակերպություններին և հայկական Միությունին:* ԲՀՀ-ն կարող է նպաստել փաստացի իրավիճակի վերաբերյալ տվյալների՝ հիմնականում ուսումնասիրությունների միջոցով, ձևավորմանը և տարածմանը: Նրա կողմից կարող է նաև օժանդակություն տրամադրվել բարեփոխումների այն կողմնակիցներին, որոնք պատրաստակամ են բաց, կառուցողական երկխոսություն նախաձեռնել, բայց կարող են լռեցվել բազմամարդ «ընդդիմադիր կոալիցիայի» կողմից: Այդ նպատակով ԲՀՀ-ն կարող է խթանել կիրառական ուսումնասիրությունները և հետազոտությունները, ինչպէս նաև տեղեկատվության փոխանակումը (օրինակ՝ պարբերական էլեկտրոնային տեղեկատուների և բաց քննարկման ֆորումների միջոցով): Նա կարող է ազգային և միջազգային մակարդակով քարոզչական գործունեություն իրականացնել՝ օգտագործելով կիրառական հետազոտությունների և ուսումնասիրությունների արդյունքները: Հարկ է ևս մեկ անգամ նշել, որ ԲՀՀ-ն կարող է չհիմնվել բացառապէս իր սեփական ֆինանսական և մարդկային ռեսուրսների վրա, այլ կարող է օգնել մոբիլիզացնելու այլ աղբյուրներից ուղղվող ֆինանսական միջոցները և այլ տեսակի օժանդակությունը:

**3. Նոր հոռետրություն.** Մենք առաջարկում ենք, որ ԲՀՀ-ն բարձրագույն կրթության ոլորտի իր ռազմավարության և նախաձեռնությունների շրջանակներում որդեգրի և իրականացնի Հայաստանի վերաբերյալ նոր՝ ավելի դրական և միևնույն ժամանակ ավելի հաստատուն հոռետրություն: *Ուսումնասիրության արդյունքների հիման վրա մենք առաջարկում ենք, որ հիմնական ուղերձը լինի այն, որ բարձրագույն կրթության*

*բնագավառում իրական, զգալի փոփոխություններն անհրաժեշտ լինելուց բացի՝ անպայման կիրականանան, իսկ ֆորմալ բնույթ կրող բարեփոխումների ընթացքը գտնվում է այնպիսի հանգուցակետում, որ դրանք կարող են վերածվել իրական բարեփոխումների:* Իսկապես, զգալի փոփոխությունները հնարավոր են և որոշակի ջանքերի ներդրման դեպքում անպայման կիրականանան՝ հաշվի առնելով այն ամենն, ինչ վերջին մի քանի տարիների ընթացքում կուտակվել և ձևավորվել է համակարգում (նոր կառույցներ, ձևեր, նորմեր և այլն, չնայած դրանց դեռևս թույլ արդյունավետությանը, գլոբալ մասշտաբով տեղեկտվության հասանելիությունն), ինչպես նաև հաշվի առնելով բարձրագույն ուսումնական հաստատություններում, պետական հիմնարկներում և պետական ու հասարակական կազմակերպություններում գործող շատ անհատների փորձառությունն ու նվիրվածությունը: Շատերն ընդունում են, որ ստատուս քվոյի պահպանումը տարբերակ չէ. չափազանց շատ թվով երիտասարդներ կշարունակեն մեկնել երկրից, իսկ մնացողներից շատերը կշարունակեն չափազանց քիչ հմտություններ ունենալ Հայաստանի քաղաքական, մշակութային և տնտեսական զարգացմանը նպաստելու համար: Երկրին իր երիտասարդ ու տաղանդավոր կադրերն անհրաժեշտ են տնտեսության, քաղաքացիական հասարակության, ինչպես նաև բարձր գնահատվող կրթամշակութային միջավայրի վերականգնման համար:

#### 4. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆՅՈՒԹԵՐՆ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Altbach, P. G. (ed.) (2012). Paying the Professoriate. A global comparison of compensation and contracts. London: Routledge.

European Commission. (2012). Higher Education in Armenia. Brussels: EACEA.

Hauptman, A., Barkhudaryan, L., and Balasanyan, S. (2011). Reforming Higher Education Financing in Armenia. *International Higher Education*, 65(Fall), pp. 24-25.

Karakhanyan, S. & Topchyan, R. (2010). Building Bridges for Transferring What? Isomorphism vs. Legitimacy. EQAF. Retrieved from:  
<http://www.anqa.am/en/Publications.aspx>

Karakhanyan, S., Van Veen, K., & Bergen, T.(2012). Teacher Perceptions of Bologna Reforms in Armenian Higher Education. *European Education*, 44(2), pp. 65–89.

Karakhanyan, S., Van Veen, K., & Bergen, T.(2012). What Do Leaders Think? Reflections on the Implementation of Higher Education Reforms in Armenia. *Educational Management Administration & Leadership*, 40,(2), pp. 752-771. Accessible at: <http://ema.sagepub.com/content/40/6/752>

Karakhanyan, S., Van Veen, K., & Bergen, T. (2011). Educational Policy Diffusion and Transfer: The Case of Armenia. *Higher Education Policy*, 2011(24), pp. 53 – 83.

Minasyan, A.& Hancilova, B.(2007). Labour Migration from Armenia in 2002-2005: A Survey. Yerevan: OSCE. pp. 34-35.

Navoyan, A. (2009). Tertiary Education Reform in Armenia: Between Soviet Heritage, Transition and Regional Integration as Its Basis. IIEP Policy Forum on 2-3 July 2009. Tertiary Education in Small States: Planning in the context of globalization. Retrieved from:  
[http://www.iiep.unesco.org/fileadmin/user\\_upload/Policy\\_Forum/2009/Navoyan\\_Armenia.pdf](http://www.iiep.unesco.org/fileadmin/user_upload/Policy_Forum/2009/Navoyan_Armenia.pdf)

NTO. 2013. Tempus Projects. Retrieved from:  
[http://www.tempus.am/index.php?option=com\\_content&view=article&id=1257&Itemid=605&lang=en](http://www.tempus.am/index.php?option=com_content&view=article&id=1257&Itemid=605&lang=en)

Sargsyan, Y. L. & Budaghyan, A.S. (2007). Towards European Higher Education Area (EHEA) Through Bologna Process. Current State, Development Trends and Problems of the Bologna Process in EHEA and Armenia. Analytical Report. Yerevan: National Center for Strategic Research in Higher Education. Retrieved from:  
[http://www.tempus.am/Higher\\_education/Status\\_Report\\_on\\_the\\_10\\_Action\\_Lines\\_of\\_Bologna\\_English.pdf](http://www.tempus.am/Higher_education/Status_Report_on_the_10_Action_Lines_of_Bologna_English.pdf)

Saroyan, A. (2008). Quality Assurance in Higher Education in The Republic of Armenia: Analysis and Recommendations. Yerevan: World Bank. Also, cf. ANQA. 2013. Armenian Quality Assurance Technical Assistance Project. <http://www.anqa.am/arqata/>

Soo, M. & Jongbloed, B. (2008). Formulating the Financing Principles and Exploring Alternative Financial Mechanisms for Armenian Tertiary Education. Report for the World Bank.

World Bank. (2013). Addressing Governance at the Center of Higher Education Reforms in Armenia. Yerevan: World Bank. Retrieved from: <http://documents.worldbank.org/curated/en/2013/01/17748657/addressing-governance-center-higher-education-reforms-armenia>

### ***Կառավարության փաստաթղթեր***

\_(2012) National Report regarding the Bologna Process implementation: 2009-2012, Republic of Armenia. Retrieved from: <http://www.ehea.info/Uploads/National%20reports/Armenia.pdf>

\_(2009) Bologna Process National Report: 2007-2009, Republic of Armenia. Retrieved from: [http://www.ehea.info/Uploads/Documents/National\\_Report\\_Armenia\\_2009.pdf](http://www.ehea.info/Uploads/Documents/National_Report_Armenia_2009.pdf)

\_(2007) Bologna Process National Report: 2005-2007, Republic of Armenia. Retrieved from: [http://www.ehea.info/Uploads/Documents/National\\_Report\\_Armenia2007.pdf](http://www.ehea.info/Uploads/Documents/National_Report_Armenia2007.pdf)

\_(2005) Towards the European Higher Education Area, Bologna Process Reports from New Members of the Bologna Process, Republic of Armenia. Retrieved from: [http://www.ehea.info/Uploads/Documents/National\\_Report\\_Armenia\\_05.pdf](http://www.ehea.info/Uploads/Documents/National_Report_Armenia_05.pdf)

### ***ՈՍՄԿ հրապարակումներ***

ANQA. Guiding Principles for Tertiary Level Educational Establishments on External Quality Assurance. Retrieved from: <http://www.anqa.am/en/Media/WorkingPapers.aspx>

ANQA. (2010). ANQA Strategic Plan 2010-2015. Transitional Period. Retrieved from: <http://www.anqa.am/en/Media/WorkingPapers.aspx>

### ***Հորվածներ***

Abrahamyan, G. (09.03.2007). Lower Learning: Students say bribery in universities is “normal.” *ArmeniaNow.com* Retrieved from: [http://www.armenianow.com/news/politics/7115/lower\\_learning\\_students\\_say\\_bribe](http://www.armenianow.com/news/politics/7115/lower_learning_students_say_bribe)

Abrahamyan, G. (20.04.2012). Brusov Battle: Fight between minister and rector continues to stir anger and questions. *ArmeniaNow.com* Retrieved from: [http://www.armenianow.com/society/education/37502/education\\_minister\\_ashotyan\\_conflict\\_brusov\\_zolyan](http://www.armenianow.com/society/education/37502/education_minister_ashotyan_conflict_brusov_zolyan)

Esipova, N. & Pugliese, A. (04.04.2013). Desire to Leave FSU Ranges Widely Across Countries. Half of those who want to migrate are searching for a better living standard. *GALLUP*. Retrieved from:  
<http://www.gallup.com/poll/161591/desire-leave-fsu-ranges-widely-across-countries.aspx>

Ioannisyann, D. (28.11.2012). Government Advice to Scientists: Leave this country. *HETQ*. Retrieved from: <http://hetq.am/eng/articles/21004/government-advice-to-scientists---leave-this-country.html>

### ***Այլ ռեզյուսիտներ***

ARMENIC. The Law On Higher Education (NON OFFICIAL TRANSLATION) Adopted on December 14 2004.  
<http://www.armenic.am/?laid=1&com=module&module=menu&id=97>

Higher Education in Armenia/ armenia\_tempus\_country\_fiche\_final.pdf  
[http://eacea.ec.europa.eu/tempus/participating\\_countries/overview/armenia\\_tempus\\_country\\_fiche\\_final.pdf](http://eacea.ec.europa.eu/tempus/participating_countries/overview/armenia_tempus_country_fiche_final.pdf)

EUA projects and reports on [EUDIS: European Universities Diversifying Income Streams](#) (2008-2011) or on [Financially Sustainable Universities: Towards Full Costing in Europe's Universities](#) (2006-2008), as well as the EU Higher Education Modernization Agenda ([http://ec.europa.eu/education/higher-education/agenda\\_en.htm](http://ec.europa.eu/education/higher-education/agenda_en.htm) )

World Bank Net Migration Statistics.  
<http://data.worldbank.org/indicator/SM.POP.NETM>

State Migration Authority. 2013.  
[http://www.smsmta.am/?menu\\_id=18](http://www.smsmta.am/?menu_id=18)